

Ագբուրի յանելում

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 30 կիրակի 2 օգոստոսի

իններորդ տարի 1898

ԲԱՏԻԱԾ Է ՏԱՐԱԶԻ ԿԻՍՍՄԵԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս է տեսնում ՏԱՐԱԶԸ շաբաթական երեք թերթ:

ՏԱՐԱԶԻ 6 ամսեայ բաժանորդագինը (յուլիսից-յունուար 99 թ.) ճանապարհածախսով

3 ր.

Հասցե՝ Тифлисъ, редакция иллюстр. жур. АГБУРЪ-ТАРАЗЪ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.



Ի ր ս լ Ե ր ի դ է մ

ԼՈՒԿՐԵՑԻՍ ԲՈՐՋԻՍ*

Ողբերգութիւն նրաք արարւածով

Վ ի ն Յ Տ Ո Ր Հ ի ՚ Ն Գ Օ ՚ ի

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Գ

Նրապարակ Ֆէրրարայում: Աջ կողմը պալատ վանդակապատ պատշգամբով: Պատշգամբի տակ մէկ դուռ: Պատշգամբին ամրացած է մի մեծ, քարի վրայ փորագրւած նիզակ տոհմագրոշմով, որի վրայ մեծ և ոսկեգօծ տառերով գրւած է «Բորջիա»: Ձախ կողմը փոքր տնակ, մի գոնով զէպի հրապարակը: Նեւուում երևում են տներ և զանգակատներ:

ՏԵՍՄԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լուկրեցիա և Գուբէսսա

Լուկրեցիա: Գուբէտտա, բոլորը պատրաստ է երեկոյթի համար:

Գուբէսսա: Բոլորը.

Լուկրեցիա: Արդեօք բոլորն էլ կրգան:

Գուբէսսա: Մէկը չի մնալ նրանցից, բոլորն էլ կրգան:

Լուկրեցիա: Գուբէտտա, նրանք ինձ խիստ վիրաւորեցին:

Գուբէսսա: Ես բախտ չեմ ունեցել վկայ լինելու դրան:

Լուկրեցիա: Նրանք քարասիրտ էին:

Գուբէսսա: Այո՛, լսեցի, նրանք բարձրաձայն արտասանեցին ձեր անունը:

Լուկրեցիա: Ո՛չ, Գուբէտտա, ոչ թէ արտասանեցին անունս, այլ թքեցին երեսիս:

Գուբէսսա: Խնջոյքի ժամանակ:

Լուկրեցիա: Եւ Ջէննարօի ներկայութեամբ:

Գուբէսսա: Ուրեմն նրանց կողմից մեծ չիմարութիւն էր, որ թողնելով Վենետիկը, եկան Փէրրարա: Ճշմարիտ որ, նրանք չէին էլ կարող ուրիշ կերպ վարել, որովհետև ծերակոյտի հրամանով այն դեսպանութեան անդամներն են, որ անցեալ շաբաթ ժամանեց այստեղ:

Լուկրեցիա: Նրանց շնորհիւ է՛, որ այժմ նա ինձ աչքից ձրել է և արհամարում է... Ո՛հ, Գուբէտտա, ես վրէժս կըհանեմ նրանցից:

Գուբէսսա: Աստուած տայ: Փառք Աստուծոյ, որ վերջապէս թողեցինք առաքելութեան և ողորմածութեան մասին ունեցած մտածութիւնները: Ինձ աւելի ազատ եմ զգում ձերդ մեծութեան հետ, երբ

*) Տես Ցարապ № 29.

որ դուք բնական զիրք ունէիք, ինչպէս այժմ: Եւ այդ հասկանալի է, լիճը կղզու հակառակն է, ջրանցքը կամրջի, իսկ ես առաքելնի մարդու հակառակն եմ:

Լուկրեցիա: Ջէննարօն էլ է եկել Փէրրարա: Աչք ունեցիր, որ նրա հետ բան չըպատահի:

Գուբէսսա: Այո՛, այ՛, հրաշք կըլինէր, եթէ մենք դառնայինք բարի մարդ...:

Լուկրեցիա: Նայիր, կրկնում եմ, որպէս զի Ջէննարօն աղատ լինի վտանգից:

Գուբէսսա: Անհող եղէք, ձերդ մեծութիւն:

Լուկրեցիա: Ես շատ կըցանկայի մէկ անգամ ևս տեսնել նրան:

Գուբէսսա: Գոհութիւն Աստուծոյ, նրան ամենայն օր տեսնում էք: Գուք կաշառել էք նրա ծառային, որ համոզել է իր տիրոջը վարձել տունը, ահա այս փոքր տան մէջ, Հէնց ուղիղ ձեր պատշգամբի դիմաց և այժմ դուք բախտաւոր էք, որ ամենայն օր կարող էք տեսնել ձեր լուսամուտից տուն ու դուրս անող այդ երիտասարդին:

Լուկրեցիա: Ես կըցանկայի իստել նրա հետ, Գուբէտտա:

Գուբէսսա: Գրանից էլ հեշտ ինչ կարող է լինել: Ուղարկեցէք Աստուֆօրն նրա մօտ յայտնելու, որ ձերդ մեծութիւնը այսօր այս ինչ ժամին սպասում է պալատում:

Լուկրեցիա: Ես այդ կանեմ: Բայց կըզմայ արդեօք:

Գուբէսսա: Հեռացէք, ձերդ մեծութիւն: Կարծեմ նա իսկոյն կանցնի այստեղից իր թեթևամիտ ընկերներին հետ:

Լուկրեցիա: Արդեօք դարձեալ ճանաչում են քեզ իբրև կոմս Բէլլէրանա:

Գուբէսսա: Նրանք ինձ ոտից մինչև գլուխ սպանացի են համարում: Ես նրանց լաւ ընկերն եմ: Ես նրանց փող եմ տալիս պարտքով:

Լուկրեցիա: Ի՞նչ կանեն նրանք փողը:

Գուբէսսա: Ա՛յ լաւ բան. փողը միշտ հարկաւոր է: Իսկ դուք զիտէք թէ ինչպէս է կապում այդ:

Լուկրեցիա: Գուբէտտա... Կարծեմ նրանք են: Ոչինչ չըմոռանաս: (Ներս է մտնում պալատը պատշգամբի սանդուղիով և անհետ է անցնում):

ՏԵՍՄԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

Գուբէսսա (Տէնա): Ո՛վ է այդ Ջէննարօն և ինչ է ուզում սա նրանից: Ես ամենևէն ցանկութիւն չունիմ իմանալու սրա բոլոր գաղտնիքները:

բայց այս խարդախութիւնը այնպէս է Հետաքրքրութիւնս շարժում, որ եթէ Լուկրէցիան Հաւատ չ'ընծայէ ինձ այս բանում, ուրեմն թող չըմտածէ էլ, որ ես նրան կ'օգնեմ: Նրա այժմեան օտարոտի սէրը կարելի է միայն պարզել նրանով, որ ինքը Բողբիգօ Բորջիայի և Վաննոցցիի աղջիկն է, որ նրա երակներում անզգամի արիւն է վազում, խառնած պապի արեան Հետ... Ուրեմն նորին մեծութիւնը պատօնականութիւն է սխում... Այժմ ես չեմ էլ զարմանալ, եթէ ասէին էլ մինչև անգամ, որ Ալէքսանդր վեցերորդ պապը Հաւատացել է Աստուծուն... (Նյուտմ է Հարեան սենեակին): Ահա և մեր երիտասարդ անխելքները... Սրանց գլխում էլ մի միտք է յղացել Ֆէրրայի դքսուհուն խիտ վիրաւորելուց յետոյ, թողնել ազատ թագաւորութիւնը և զալ Ֆէրրարա: Եթէ ես սրանց տեղը լինէի, չէի մասնակցիլ Վենետիկեան ղեսպանութեանը: Բայց երիտասարդութիւնը իր տեսակ է մտածում և ուրախութեամբ գնում է ղէպի ակնյայտնի վտանգը:

(Ներսէս մտնում էրիտասարդները եւ չընկալելով Գուբէտտային, որ կանգնել էր սենեակից մէջի մօտ գնեւորահամար, խօսուցում էն կիսայնի, անհամբարութեան չեւեր ցոյց բաշտել):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԲՈՐԴ

Գուբէտտա, Ջէննարօ, Մաֆիօ, Ջէպպօ, Ասկանիօ, Ապոստոլօ, Օլոֆէրնօ:

Մաճճիօ (յած չայնով): Ինչ որ ուղում էք ասացէք, պարոններ, բայց ես համոզւած եմ, որ Լուկրէցիա Բորջիային խիտ վիրաւորելուց յետոյ, չէր հարկաւոր Ֆէրրարա զալ:

Ապոստոլօ: Ինչ պէտք է անելինք, ծերակոյրը մեզ այտեղ նշանակեց: Իսկ կայ արդեօք մի միջոց չրկատարելու վենետիկեան ծերակոյտի հրամանները: Քանի որ մեզ ընտրեցին, մենք պարտական էինք ուղևորել: Այս ասելով ես չեմ վիճում, Մաֆիօ, որ Լուկրէցիան իրաւ սարսափելի և խիտ թշնամի է: Չէ որ նա է այտեղ ամենքի հրամայողը:

Ջէպպօ: Ինչ կարող է անել նա մեզ, Ապոստոլօ: Միթէ մենք Վենետիկի Հասարակապետութեանը չենք ծառայում: Միթէ մենք ղեսպանութեան անգամ չենք: Միթէ մեզանից մէկին զեպչել, չէ նշանակում պատերազմ յայտարարել դօժին: Իսկ Ֆէրրարային այնքան էլ յարմար չէ կուել Վենետիկի Հետ:

Ջէննարօ (բեմի խորում, մտածչոյ, չըխառնուելով խօսուցումներին): Ո՛հ, իմ մայր: Ո՛վ ինչ կարող է ասել, թէ ինչ կարող եմ անել իմ խեղճ մօր համար:

Մաճճիօ: Կարելի է քեզ զերեզման դնել, Ջէպպօ, բայց և այնպէս չըզիպչել քո մէկ մագին անգամ: Բորջիան թոյն ունի, որ ներդործում է առանց աղմուկի և ճայթիւնի, բայց աւելի լաւ քան թէ կացինը կամ սուրը: Յիշէր այն միջոցը, որով Ալէքսանդր Վեցերորդ պապը սպանեց Բայազէդի եղբայր Ջիզիմին:

Օլոճէրնօ: Եւ քանի քանի ուրիշներին...

Ապոստոլօ: Ինչ վերաբերում է Բայազէդի եղբորը, ճշմարիտ որ նրա պատմութիւնը Հետաքրքիր է, թէպէտ և ոչ այնպէս սարսափելի: Պապը Հաւատացրել էր Ջիզիմին, որ նրան թունաւորել է նախաճաշիկի ժամանակ Փրանսիայի Կարոլոս թագաւորը: Ջիզիմին Հաւատաց դրան և ստացաւ Լուկրէցիա Բորջիայի գեղեցիկ ձեռքով ղեղթափ, որ երկու ժամից յետոյ բաժանեց Բայազէդին իր Հարազատ եղբորից:

Ջէպպօ: Կարծեմ դժբախտ տաճիկը քաղաքականութիւնից քիչ հասկացողութիւն ունէր:

Մաճճիօ: Այո, Բորջիաները ունին թոյն, որ կամքով սպանում է մարդուն մէկ օրուայ կամ մէկ տարուայ մէջ: Այդ նենգաւոր թոյնով նրանք այնպէս լաւացնում են զինու Համը, որ մեծ ախորժակով ես խմում: Կայ և այսպէս. յանկարծ մարդս սկսում է թուլանալ, նրա մորթին կնճռօտում է, աչքերը ներս են բնկնում, մազերը սպիտակում են, ատամները փշրում են ատակու նման, նա էլ չէ ման դալիս, այլ նրան ուժով տանում են: Զուհչ չէ քաշում, այլ կերկերում է: Չէ ծիծաղում, չէ քնում և միշտ արեւումն է ընկած: Մի քանի ժամանակ զարձեայ կուում է մահւան Հետ և այնուհետև մեռնում է: Ահա նա մեռաւ, իսկոյն այտեղ մարդիկ մտաբերում են, որ վեց ամիս կամ մէկ տարի առաջ Հանգուցեալը մի բաժակ Կիպրոսի զինի խմեց Բորջիաների սեղանին նստած ժամանակ... (յեւ գոտնուելով): Նայեցէք, պարոններ, ահա զալիս է Մոնտէֆէլտրօն, որին դուք կարելի է ճանաչէք: չէնց սրա Հետ էլ նոյնը պատահեց... ահա նա հրապարակի վրայ է... Նայեցէք նրան (Բեմի խորից այդ ժամանակ անցնում է մի սպիտակազէր մարդ, նիւտր, այս ու այն կողմն ընկնելով, կող յետեւով յետնափայլին եւ լռելիքում փախաւաճ):

Ասկանիօ: Խեղճ Մոնտէֆէլտրօ:

Ապոստոլօ: Քանի տարեկան է նա:

Մաճճիօ: Իմ հասակի է: Նա քսան և իննը տարեկան է:

Օլոճէրնօ: Դեռ անցեալ տարի ես պատահել եմ դրան երիտասարդ և առողջ:



ԱՇԽԱՏՈՒՐԻՆ ԵՒ ՎԱՅԵԼՆՈՒՐԻՆ

[Faint, illegible text from the reverse side of the page is visible through the paper.]

Մաճճիօ: Երեք ամիս սրանից առաջ նա ընթրեց մեր նորին սրբութիւն սուրբ պատի մօտ նրա Բէլէղերեաւ Վիլլայում:

Ասկանիօ: Ո՛հ, սարսափելի է:

Մաճճիօ: Այո՛, շատ սարսափելի բաներ են պատմում Բորջիայի ընթրիքների մասին:

Ասկանիօ: Այդ ընթրիքներում թաղաւորում է թունաւորութեան հետ միասին և անգուսպ անառակութիւն:

Մաճճիօ: Տեսնում էք, պարոններ, ինչպէս այս հրապարակը դատարկ է: Թողովուրդը չէ մօտենում դքսական պալատին. նա վախենում է, որպէս զի այդ պալատում զիշեր, ցերեկ պատրաստող թոյնը չըթափանցէր պատերի միջով:

Ասկանիօ: Յամենայն դէպս, պարոններ, որովհետև դեսպանները արդէն տեսակցութիւն ունեցան դքսի հետ, մեր յանձնարարութիւնը գրեթէ կատարւած է: Գեսպանների հետևորդները բաղկացած են չիսուն հոգուց և այդ բաղմուտեան մէջ մեր բացակայութիւնը չի նկատուի: Ուստի ես կարծում եմ, որ մենք լաւ կանէինք, եթէ շուտով հեռանայինք Փէրրարայից:

Մաճճիօ: Հէնց այսօր և եթէ:

Ջէպպօ: Պարոններ, վաղն էլ կարելի էր: Իսկ այս երեկոյ ես հրաւիրւած եմ ընթրիքի իշխանուհի Նէգրոնի մօտ, որի վրայ սաստիկ սիրահարւած եմ: Չէի ուզում նրան առիթ տալ մտածելու, որ ես փախչում եմ Փէրրարայի զեղեցիկ կնոջից:

Օլոճէրնօ: Դու այսօր Նէգրոնի մօտ հրաւիրւած ես ընթրիքի:

Ջէպպօ: Այո՛:

Օլոճէրնօ: Ես նոյնպէս:

Ասկանիօ: Ես նոյնպէս:

Ապոստոլօ: Ես էլ:

Մաճճիօ: Ես էլ:

Դուրէսսա: (Դուրս գալով «եսն պահէ»): Ես նոյնպէս, պարոններ:

Ջէպպօ: Ա՛, ահա և Բէլէրանան: Չատ զեղեցիկ: Ինանք բոլորս միասին: Դա մի շատ ուրախ երեկոյթ կըլինի: Բարև ձեզ, Բէլէրանա:

Դուրէսսա: Ասուած երկար կեանք տայ ձեզ, Ջէպպօ:

Մաճճիօ (Յած չափով Ջէպպօին): Չըկարծես, Ջէպպօ, որ վախկոտ եմ, բայց ես կրկնում եմ, որ մենք ընթրիքի չըպէտք է գնանք: Նէգրոնի պալատը դքսի պալատին կից է և ես էլ շատ չեմ հաւատում սինիօր Բէլէրանայի մարդավարութեան:

Ջէպպօ (յած չափով): Դուք, Մաֆֆիօ, խելա-

զարել էք: Նէգրոնին գրաւիչ կին է, ես սիրահարւած եմ նրա վրայ, իսկ Բէլէրանան— շատ լաւ մարդ է: Ես արդէն տեղեկութիւններ եմ հաւաքել սրա և սրա բարեկամների մասին: Իմ հայրը սրա հօր հետ միասին պատերազմել է Գրենադան նաւճելու ժամանակ...

Մաճճիօ: Դա ապացոյց չէ:

Ջէպպօ: Դուք, Մաֆֆիօ, ազատ էք և կարող էք չըզայ ընթրիքի:

Մաճճիօ: Ես կըզամ, եթէ դուք էլ գաք, Ջէպպօ:

Ջէպպօ: Բրաւօ, իսկ դու, Ջէննարօ, դու էլ կըզամ մեզ հետ:

Ասկանիօ: Միթէ տիկին Նէգրոնին քեզ չէ հրաւիրել:

Ջէննարօ: Ո՛հ, իշխանուհին կարծում է, որ ես այնքան արիստոկրատ չեմ:

Մաճճիօ (Ժպտալով): Դու երբի սիրահարական մի տեսակցութեան կերթաս:

Ջէպպօ: Ի մի բան. պատմիր մեզ ինչու մասին էր խօսում քեզ հետ Լուկրէցեան անցեալ գիշեր: Ինչպէս նկատեցինք, նա խելագարւած է քեզ վրայ: Նա երևի քեզ շատ բան ասաց և խնջոյքի ազատութիւնն էլ նրան սուիթ էր տալիս ասելու: Յայտնի է արդէն, որ կանայք դիմակաւորում են, որպէս զի աւելի համարձակ յայտնեն իրանց զգացմունքները: Գիմակաւորւած երեսը միւսնոյն է, թէ ազատ հոգին: (Մի ասնի բողէ արդէն Լուկրէցեան կանգնած է պարզամէջ վրայ, և Բարջայոյն է վանդակը: Նա ակնջ է գնում):

Մաճճիօ: Դու բնակարան վարձել ես ուղիղ նրա պատշգամբի դիմաց: Ջէննարօ, Ջէննարօ:

Ապոստոլօ: Դա վտանգաւոր չէ, բարեկամ, ասում են, որ դուքսը շատ նախանձոտ է:

Օլոճէրնօ: Ուրեմն խոստովանիր մեզ, արդեօք երկար շարունակեց քո խարդախութիւնները Լուկրէցիայի հետ:

Ջէննարօ: Պարոններ, եթէ դուք դարձեալ կրկրկնէք այդ սարսափելի կնոջ անունը, զօրծը մեծամարտութեան կըհասնի:

Մաճճիօ: Դա կատակ է, Ջէննարօ: Բայց ես կարծում եմ, որ քեզ հետ կարելի է խօսել նրա մասին, որովհետև դու գործ ես ածում նրա գոյները:

Ջէննարօ: Ի՞նչ ես ուզում ասել գրանով:

Մաճճիօ (յոյց պալով նրան շարժել, որ ասնիք Ջէննարօն): Իսկ այս շարժքը:

Ջէննարօ: Այս ինձ ուղարկել է Փիամէտտան:

Մաճճիօ: Դու կարծում ես: Այդ Լուկրէցիան

է հնարել: Նա ինքն է կարել այս շարժը յատուկ քեզ համար, իր սեփական ձեռքերով:

Ջէննարո: Արդեօք ուղիղ է այդ, Մաֆֆիօ: Արտեղից դիտես դու այդ:

Մաֆֆիօ: Քո ծառայից իմացայ, որ չեղ շարժը յանձնեց և որին Լուկրէցիան կաշառել էր:

Ջէննարո: Անէճք (հանում է շարժը, պարտաւորում է և հոխորձում որսերով):

Լուկրէցիա (Յի հող): Ո՛հ, սարսափ (իջեցնում է շարժը և անյայտանում):

Մաֆֆիօ: Սակայն նա բաւական գրաւիչ է:

Ջէպպօ: Այն, բայց նրա գեղեցկութեան մէջ էլ ինչ որ չարագուշակ բան է նկատուում:

Մաֆֆիօ: Դա ոսկին է սատանայի պատկերով:

Ջէննարո: Օ՛, անիծեալ լինի այն Լուկրէցիա Բորջիան: Դուք ատում էք, որ նա ինձ սիրում է:

Աւելի լաւ: Թող այդ նրա համար պատիժ լինի: Նա ինձ սարսափեցնում է: Դու գիտես, Մաֆֆիօ, որ միշտ այդպէս է լինում, չի կարելի բոլորովին անտարբեր լինել դէպի այն կինը, որ մեզ սիրում է:

Արտեղի է նրան սիրել կամ արհամարել: Իսկ ինչպէս սիրել Լուկրէցիային... Առ հասարակ պատահում է, որ քանի կինը ձեզ հետամուտ է լինում իր սիրով, դուք աւելի ևս խիստ էք արհամարում նրան: Իսկ Լուկրէցիան ինձ ձանձրացնում է, շրջապատում է, պաշարում է ինձ, ինչպէս կարող էր ևս արժանանալ նրա սիրոյն: Դա ամօթ է և դրժարատութիւն: Հէնց այն գիշերից սկսած, երբ դուք արտասանեցիք նրա անունը, չէք կարող երևակայել, թէ որ աստիճան ատելի է թուում նոյն իսկ մտաբերել այդ անպիտան կնոջը: Առաջ ես Լուկրէցիային տեսել էի միայն հեռուից, երկար տարածութեան վրայ, ինչպէս մի ահարկու երևույթ, որ կանգնած է ամբողջ Իտալիայի վրայ: Այժմ այդ տեսիլը դարձաւ բացառապէս դէպի ինձ. նա նստած է իմ գլխիս, փայփայում է ինձ և ցանկանում է ձեռք ձգել իմ անկողինը: Դա սարսափելի է... Օ՛, Մաֆֆիօ, նա սպանեց քո հղբայր Գրաւինին: Ես քեզ կրիտիսարինեմ նրան, ես վրէժխնդիր կըլինեմ նրա փոխարէն... Ահա նրա գարշելի պալատը, անառակութեան, մատնութեան, սպանութիւնների, շնութեան և արիւնապղծութեան պալատը, Լուկրէցիա Բորջիայի պալատը: Օ՛, ես այս բոլորին չեմ կարող ապուսկել այն կնոջը, բայց դոնէ կարող եմ խայտառակութեան մի դրօշմ դնել նոյն իսկ նրա պալատի վրայ: (Անիգնում է արեւոյ նստարանի վրայ, որ դրած է պարզամէջի պատի և նիւայով չգնում է

ներսէ- Բորջիա Բասի սատանի պատը, այնպէս որ մտնէ միայն «օրջիս»):

Մաֆֆիօ: Ի՞նչ է անում նա:

Ջէպպօ: Մի տառ պակաս է Բորջիայի անւան. դա, Ջէննարօ, միւսնոյն է թէ գլուխ չըկայ ուսերի վրայ:

Ջէննարո: Եթէ նա կրկամենայ որոնել մեղաւորին, ես կընտրեմ նրան:

Գուրէսս: Ես շատ կըցանկայի այդ: Երևի այդ կամաչեցնէր Լուկրէցիային: (Մի քանի բողէ շարունակ երջո- Տարդ սե- հագնած ման էն գայիս հրապարակի վրայ և հանում էն ամէն բան):

Մաֆֆիօ: Պարոններ, այնտեղ կասկածաւոր կերպարան քննելով մարդիկ հետաքրքրութեամբ նայում են մեզ վրայ: Կարծում եմ, աւելի լաւ կանէինք եթէ հեռանայինք... Նոր չիմարութիւններ մի սկսիլ, Ջէննարօ:

Ջէննարո: Անհոգ եղիր, Մաֆֆիօ: Ձեռքդ... Յանկանում եմ, որ այս գիշեր լաւ և ուրախ ժամանակ անցկացնէք: (Ներս է մտնում իր սրահ, մի անգիւղ հեռանում էն):

ՏԵՍԱԲԱՆ ՁՈՐՐՈՐԳ

Երկու մարդ, սեւեր հագած.

Առաջին: Դու այտեղ ինչ ես շինում, Բուստի- գէլլօ:

Երկրորդ: Սպասում եմ, որպէս զի դու հեռանաս այտեղից, Աստուֆօ:

Առաջին: Ճշմարիտ:

Երկրորդ: Իսկ դու այտեղ ինչու ես ման գալիս:

Առաջին: Սպասում եմ, մինչև դու այտեղից կըհեռանաս:

Երկրորդ: Դու ումն ես ուզում:

Առաջին: Այն մարդուն, որ ներս մտաւ այտեղից: Իսկ դու ում ես որոնում:

Երկրորդ: Ես էլ նրան:

Առաջին: Թ՛ֆն:

Երկրորդ: Ի՞նչ ես ուզում անել նրան:

Առաջին: Տանել նրան դքսուհու մօտ... իսկ դո՛ւ:

Երկրորդ: Տանել դքսի մօտ:

Առաջին: Ո՛չ ստտանայ:

Երկրորդ: Ինչ կանէ նրան դքսուհին:

Առաջին: Սիրահարական դորժ կայ: Իսկ ինչ կանի նրան դուքսը:

Երկրորդ: Երևի կախելու համար է կանչում:

Առաջին: Ի՞նչ անենք այժմ: Խօ չի կարող



Ի ս ա լ ա կ ա ն ի կ ե ա ն է ի ց



Յ ա դ ք ա ն ա կ

մէկ անդամից լինել և դքսի և դքսուհու մօտ, լինել սիրահար և կախել:

Երկրորդ: Ահա ուս փող: Խաղ անենք արծիւ, որին կրնկնի, էա:

Առաջին: Արի իաղանք:

Երկրորդ: Եթէ ես տանել տամ, կասեմ նորին մեծութեանը, որ թռչնին չըղտայ իր բնի մէջ: Ինձ շատ էլ չեն հետքըբըբում դքսի գարծերը: (Հնչում է փողը):

Առաջին: Արծիւ:

Երկրորդ (Բարչբայնեւոյ փողը): Վանդակ:

Առաջին: Ուրեմն թող նրան կախեն, տար նրան, մնաս բարև:

Երկրորդ: Յետուութիւն:

(Առաջինի գնալուց յետոյ, երկրորդը Բայն է անում պալատի դռնը, որ գնում է պարզամէքի սառ, ներս է մտնում և ինչոյն վերադառնում է չորս մարդու ողջացումէն, որոնցով սխալ է բաղիւել Ջէնարօի սան դռները):

Վարպայրը իջնում է
ՎԵՐՋ ԱՌԵՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ
(Կրօնաբանակի)

* * *

Երագիս մ'էջ ծովը տեսայ—

ծովը լազուր ու անդ՛րք,

Նրա լռիկ ափի վրայ

Ընկած էի վիրաւոր:

Մեղմ ու թալուկ ծովն էր հետում—

Մտորմանքի մ'էջ անծէ՛ր.

Իսկ ես մննա՛կ, իսկ ես տրտում՛

Վէրքս խորին խոստում էր:


Եւ հոգուս մ'էջ մի ձայն ծորեց՝

Մի ձայն քնքո՛ւշ, սուրբ սրտից—

Ա՛խ, այն մայրս էր, կանչում էր ինձ

Հնու՛ւ, հար սգատ ափերից:

Ա. Բահակեան



Ի՞նչ է ԿԵԱՆԲԸ

(Յօսիւիէս եւ Լաբուլի)

I

Մարդկային կեանքը նման է ճանապարհի, որ վերջանում է անդնդով: Առաջին քայլից իսկ մեզ նախազգուշացնում են այդ մասին, սակայն օրէկեք հրատարակած է, և մենք պէտք է շարունակ առաջ դնանք: Կուզէի յետ դառնալ... Գնա՛, գնա՛:

Մի ինչ-որ անյաղթելի ծանրութիւն, մի ինչ-որ անդիմադրելի ոյժ մեզ քարշում է, և մենք պէտք է անդադար առաջ շարժենք դէպի անդունդ:

Հագարաւոր խոչընդոտներ, հագարաւոր դժուարութիւններ... Գո՛նէ՛, եթէ կարողանայի անցնել այդ անդնդի մօտով!... Ո՛չ, ո՛չ, դու պէտք է գնաս, պէտք է վազես:

Ի՛հ, մենք էլ մխիթարում ենք նրանով, որ ժամանակ առ ժամանակ հանդիպում ենք այնպիսի առարկաների, որոնք մեզ զարճացնում են. հոտող ջրերի, մօտովն անցնող ծաղիկների և այլն: Յանկալի էր կանգ առնել: Գնա՛, գնա՛:

Այն ինչ՝ դու տեսնում ես որ ետևիցն ամեն ինչ բնկնում, կործանում է. սարսափելի նայթիւն, ա՛նդառնայի կորուս:

Որպէս մխիթարանք քեզ ծառայում է այն, որ յաջողում է անցնելիս սրկելով ձեռք բերել՝ մի քանի ծաղիկներ, որոնք հէնց քո աչքի առաջ, հէնց նայն օրնուետ, արդէն թառամում են, և մի քանի պտուղներ, որոնց դու կորցնում ես այն ժամանակ, երբ տեսնում ես նրանց համբ:

Չարունակ յափշտակած, զրաւած, գմայլած՝ դու մօտենում ես անդնդին: Արդէն ամեն ինչ բոկրսում է ատրիճանաբար հարթել, հաւասարել. այգիներն աւելի քիչ են ծաղիկներով զարդարած, ծաղիկներն աւելի քիչ են փայլուն, նրանց գոյնքը այնքան էլ կենդանի չեն, դաշտերն աւելի քիչ են դուրեկան աչքի համար, ջրերն այնքան էլ պարզ չեն. ամեն ինչ հարթւում, հաւասարում է, շուրջդ էլ մեռելային խաւար պատում. սկսում ենք զգալ օրհասական անդնդին մօտենալը:

Բայց հարկաւոր է հասնել մինչև ծայրը: Մի քայլ ևս: Սարսափն արդէն պղտորում է զգացմունքներդ, զլուխդ պտտում է, հայեացքներդ մօրթում են, պէտք է գնալ: Միթէ յետ դառնալ... Չրկան միջոցներ. ամեն ինչ կործանեց, ամեն ինչ անհետացաւ, ամեն ինչ հարթւեց:

Ճանապարհը — այդ կեսնքն է, անդունդը — այդ մահն է:

II

Բօսսիւէտի ուսմունքը Հիասթափութեան վարդապետութիւն է, այն ի՛նչ կրօնը, որին մենք պատկանում ենք, մինչև առաքինութեան է Հասցրել Հաւատը, Յոյսը և Աէրը, և այդ կրօնի մէջ ոչ մի կերպ չենք կարող տեղ տալ չափազանցութեանը: Եթէ Հետեւենք Բօսսիւէտի այդ ուսմունքին, ապա ուրեմն մեզ մնում է քաշել մի վանք, անիծել այ՛ սարոսափելի կեանքը՝ ուր ամեն ինչ Հիասթափութիւն է կամ աւելի լաւը՝ չըմտածել ո՛չ մի բանի մասին, դառնալ աղանդաւոր, Հեշտասէր և և ասել. քանի որ մեզանից յետոյ ամեն ինչ պէտք է վերջանայ, ուրեմն թող մինչև այդ ժամանակ զարճանանք, քէՖ քաշենք և ամենևին չըհոգանք ապագայի մասին: Ինձ թուում է սակայն, որ ներկայ ժամանակում, պրոգրէսսի՝ յառաջադիմութեան գաղափարի այս տիրապետութեան օրերում, կեանքի մասին եղած Հասկացողութիւնը միանգամայն փոխւեց. այդ արդէն ո՛չ թէ՛ դէպի անդունդ տանող ճանապարհ է, այլ մի այնպիսի ճանապարհ, որ աստիճանաբար բարձրացնում է և Հասցնում է լերան գլուխը, Հասցնում այնտեղ, ուր արևի մուտքը կախնում է միւս երկրագունդը անցնելու մէջ միայն, և ուր արևմուտքը միւսնոյն ժամանակ արևելք է:

Ամբողջ կեանքը ստանում է միանգամայն այլ կերպարանք, երբ զիտես որ, եթէ ետևդ թողնում ես էլ մի քանի անցած-գնացած օրեր, այնուամենայնիւ իւրաքանչիւր քայլափոխ անելիս՝ առաջ ես գնում առաքինութեան և ճշմարտութեան ճանապարհով: Կեանքը անիծելու փոխարէն, ես, ընդհակառակը, կրփառաբանէի նրան և կ'ասէի.

Դու, մանուկ, որ աշխարհ ես գալիս՝ փայփայանքներով և մօրդ սիրով շրջապատւած, օրհնաբանիք երկինքը այն բանի համար, որ քեզ վիճակեց յայտնել այնպիսի դարում, որ իր ետևից թողնում է այսքան անցած ժամանակ: Դու նրանում կրկրտնես ոչ միայն լաւագոյն կրթութիւն, այլ և մի այնպիսի Հասարակութիւն, որ, ինքը մայր լինելով, քո առաջին քայլերին ընթացք կրտայ, կ'առաջնորդէ:

Եւ դու, պատանի, մի վախիր, առաջ գնա. բոլոր մատաղազաս մարդկանց նման՝ դու էլ կրհանդիպես երկուսի բաժանող շաղին, որին հանդիպել է Հերքուէտը, և ուր կամենում էին նրան յափշտակել, մի կողմից՝ առաքինութիւնը, միւս կողմից՝ անառակութիւնը: Քեզ մնում է ընտրութիւն անել. — եսական կրքերի՝ որոնք կ'անջատեն քեզ միւս մարդ-


կանցից և առաքինութեան ճանապարհի միջև, որ ոչ այլ ինչ է, բայց եթէ բարեկամութեան, սիրոյ և անձնանւիրութեան ճանապարհ:

Դու էլ գնա, ո՛վ երիտասարդ. որքան էլ Համեստ լինիս դու, դարձեալ կարող ես օգտակար լինել Հայրենիքիդ, մարդկութեանը, որոնք կարօտութիւն ունին բարեկամօրէն ձեռք սեղմելուն և փնտրում են մի այնպիսի սիրտ, որ զարկէր նրանց սրտերի Հետ միւսնոյն ձայնով:

Եւ դու, ո՛վ Հասուն մարդ, քո ուժերի ծաղկման և ընդունակութեանց լիովին դարգացման հասած, միթէ քիչ թշուառութիւններ կան, որ կարողանայիր օգնութեան ձեռք մեկնել և կամ միթէ դու չէիր կարող ամբողջի մէջ կրթութիւն տարածելուն նպաստել: Դու Հարուստ ես և երջանիկ, դու արդէն բարի անուն ունես, Համբաւ, Համարում ունես, օգուելի այդ Համբաւիցդ, օգուտներ քաղիր քո այդ դիրքից և թող բաց լինի քո ձեռքը ճիշտ այնպէս, ինչպէս քո սիրտը: Կան իրաւունքներ, որոնց պաշտպանելովը դու զբաղւել կարող ես, և կրկտրնւեն եղբայրներ, միանգամայն պատրաստ քեզ Հետ միանալու. քեզ կանչում է Հայրենիքը. ճշմարտութիւնը աղերսում է քեզ, պատասխանիր նրա ձայնին: Գնա՛ առաջ և մի հողալ ապագայի մասին:

Իսկ ծերուկը, կ'ասեն ինչ անի: Նա արդէն Հասել է անդնդի ծայրին և ահա մենք անանցական ու տխուր կոմեդիայի վերջին գործողութեան Հանդիսատես ենք լինում: Դէհ, այլ ևս ինչ. ծերութիւն է. — ես գուցէ և կարող եմ խօսել նրա մասին՝ գործին լիովին ծանօթ լինելովս: Ես արդէն Հասել եմ այն Հասակին, որի մէջ, ինչպէս ասում է Բօսսիւէտը, արդէն զգացում է մեռելային խաւար: Ես այլ ևս ոչ մի բանից երկիւղ չ'ունեմ և ոչ էլ սպասելու բան այս աշխարհից. ինձ այլ ևս չեն կարող վերադարձնել ոչ անցած երիտասարդութիւնս, ոչ կորցրած բարեկամներիս, և ոչ էլ շարունակ մաքառելուց լքած՝ քաջ արեւստակիցներին: Չընայելով դրանց՝ իմ սիրտը յոյսերով լիքն է: Չի անցնում ոչ մի օր, որի ընթացքում ես չըկարողանայի որևէ օգտակար գործ կատարել: Եթէ ինձ յաջողւեց որևէ մէկի մէջ զարթեցնել բարի ցանկութիւն, գրգռել ազնիւ կիրք, կենդանացնել սէր դէպի Հայրենիք և ազատութիւն, միթէ իմ օրը կարող է կորած Համարւել:

Գ. Բարսեղեանց



ԱՐԱՊԵՏԻ ԳՍԳԸԹԻՆ

Մ առչ է ձիրակը իր արտաքին տեսքով, որջերի նմանոց գիւղերով, միապագանց դաշտավայրերով, լեռի ու մերկ լեռներով: Չունի նա բազմակողմանի բուսականութիւն, չունի բանաստեղծական տեսարաններ: Միայն Արագածն է (28 վ. Ալէքսանդրապոլից գէպ արևելահարաւ), որ գէթ մասամբ մեղմացնում է այդ ազբառութիւնը:

Նա իր լայն փէշերը փռած, ձիւնապատ գագաթն գէպ երկինք ուղղած, նայում է շուրջը և ամեն մի հաչի չիշեցնում անցած-գնացած դէպքեր, հին-հին սրտմուծիւններ: Ժողովուրդը առանձին պատկառանքով է գիտում այդ ճերմակ հսկայի դէմքը, որովհետև հաւատացած է, թէ նրա գագաթին է կախւած «Լուսաւորչի Կանթեղը», որ իւրաքանչիւր գիշեր առկայծում է մթութեան միջից, թէ այդտեղից է մեր «յոյս-հաւատք» հիմնադիրը հսկում իր գաւակների վրայ:

Հարուստ են Արագածի լանջերը բուսականութեամբ, սիգաւէտ խոտով երփներանգ ծաղիկներով, սառնորակ վտակներով, լճակներով: Հայտա անուշաբույր, զովարար օդը, հապա ձորերն ու ձորակները...

Չմեռը նա իր ամբողջ հարստութիւնը թագցնում է սպիտակ սաւանի տակ, իսկ երբ գայիս է գարունը-ամառը, երբ արեգակը իր սուր սուր ասեղներով սկսում է ճակոտել նրա մարմինը, այն ժամանակ ամօթխած Արագածը նազելի հարսի նման կամացուկ յետ ու յետ է քաշում իր սպիտակ քօրը, բաց է անում իր գրաւիչ կուրծքը, ուր կարճ միջոցում հաւաքում են մարդ և անասուն՝ իրանց քաղցն ու ծարաւը չաղեցնելու: Թէ հաչ, թէ թիւրդ, թէ թիւրք այդտեղ են պայիս ամառն անցկացնելու և այդ ժամանակաշրջանում մի խաչտաբխէտ տեսարան են ներկայացնում Արագածի լանջերը:

Յուլիս ամսի 15-ն էր... Արեգակն արդէն պատրաստուում էր իր մօր գիրկն ընկնելու, երբ մենք (5 հօգի) մեկնեցինք Արխալի գիւղից՝ լի բուռն բերրանքով, վարդագոյն չոչերով, թէ շուտով պիտի համբուրենք Արագածի այնքան գրաւիչ կուրծքը, անմիջապէս նրա հսկայական ստինքներից պիտի ծծենք կենսատու կաթը, սառնորակ ջուրը, թէ նրա այէզարդ գագաթից պիտի գիտենք մեզ համար թանկագին վաչերն ու չուշարձանները: Քարքարոտ մանր-մունր ելէջներով լի ճանապարհը կարծես ոչ մի զժւարութիւն չէր ներկայացնում: Ժամանակը սահում էր աննկատելի կերպով... Ահա վերջապէս փչեց երեկոյեան զեփիւռը, ահա երևաց ոսկեճաճանց վերջալույսը: Մի քանի րոպէ ևս և ամբողջ հորիզոնը ծածկեց խաւարով: Լուսը թաշուկների անուշիկ դալալը, դադարեց ժրջան մեզի, չարաճճի բզեզի աղմուկը: Մի քանի քայլ ևս և մենք արդէն կանգնած ենք Արխալի եայլի միջին: Քիչ հեռու, կանաչ արօտում դեռափթիթ գիւղիւհիւները ցերեկւայ աշխատանքը վերջացրած, շղթայաձև շրջան են կազմել և սլարում ու երգում են՝ սէր, ազատ ու անկեղծ սէր...

Արագեազ բարձր տեղ է,
Ջուրը հիւանդի դեղ է,
Սիրած սիրածի չեն տայ,
Էս է՛նչ անօրէն գեղ է.

Սարերի հովին մեռնիմ,
ձէկ գեադի բոլին մեռնիմ,
Էս օր օխթն օր չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնիմ:

Ուռի ես՝ կռանայ մի,
Մեր տանից հեռանայ մի,
Եւր, Աստուծոյ կրօնքս,
Սիրել ես, մոռանայ մի...

Դալալուում են բնութեան այդ հարագատ գաւակները և մօտից բլրակներն ու ձորակները արձագանք են տալիս նրանց վերք ու երգերին, կենսաթրթիւ գագցմունքներին: Իսկ վառ աստղերն ու լուսինը երկնքից և Արագածի սպիտակ գագաթն ակնապիշ-անձայն լսում են սիրոյ երգը և կարծես լուրեայն միմեանց շշջում, թէ որքան քաղցր է սէրը, թէ որքան թովիչ է նրա վաչերը:

Այդ իդիլական պարագաներում ընթերցուց յետոյ, մենք ընդունում ենք Մորփէտի հրաւերը և հանգիստ բուռն մտնում բաց օդում, մեզ պահապան՝ հրաւերելով երկնքի անթիւ աչերը—վառվուռն աստղերը:

Գիշերուայ ժամը 3-ին վեր ենք կենում մեր ուղին շարունակելու. անցնում ենք ձորակների ու բլրակների վրայից, առակների ու լճակների փերից, ակնատես լինում խաւարի և լուսոյ կուրին, վերջինի չղթանակին և մօտենում Արագածի իսկական գագաթին: Այդտեղ մինչև ծնկները քարակոյտերի մէջ թաղւելով, ստոճ ձիւների վրայից մագցելով, հասնում ենք մեր կէտ՝ նպատակին: Ժամը 9-ին լսեց մեր ընկերոջ հրաջանի խուլ պայթիւնը... Արագածի փոքրիկ գագաթը (13.200 ոտնաչ. բարձր ճովի մակ.) մեր ոտների տակն էր արդէն:

Մենք իսկույն հեռագիտակն ուղղում ենք այս ու այն կողմ և ուշի ուշով դիտում շրջակայքը.—Ահա մաշո Արարատը, որ անընդհատ և անդուլ նայում է դէպ արևմուտք և այ կողմեր, տեսնում իր տարագիր գաւակների թշուա վիճակը, նրանց աւերած վաթանը, դուշմանի ձեռքով պղծւած կոչս աղջիկները, արիւնով ներկւած սրբութիւնները և իր դառն արցունքներն մանրիկ առակներ դարձնելով, խառնում օձապտոչոյ Արաքսին, նրա վշտամորոք ալիքներին:

Ահա կուսական անտառների հսկան—Սարիղամիշի Ս. Խաչ սարը, ահա Բարգոդի լեռները (արևմուտքում), թիւրքական գագանութիւնների այդ անխօս վկաները: Ահա և Կովկասեան ինքնագոհ ու ինքնավստահ լեռնաշղթաները երեք փթխարի գագաթներով:

Այդ ամենի վրայ աւելացրէք մշուշապատ Գեղամաչ լիճը, Արաչի լեռը (Ծաղկավանք), Կաթուղիկէ Ս Էջմիածինը, Անիի աւերակները, Թեաբայթու, Սյաջա, Ղարախաչ Գեարըն-Ղաչա լեռները և այն ժամանակ կըստացուի այն բազմակողմանի և բազմախորհուրդ պանորաման, որ բացուում է Արագածի գագաթից:

Իսկապէս Արագածը բաղկացած է չորս գագաթներից, որոնցից երկուսը երևում են Արարատեան դաշտից,

իսկ միևս երկուսը Ջիրակից, Դրանց մէջ տեղը կայ մի մեծ ձոր՝ ձիւնապատ սառցարաններով լցւած: Ըստ երևոյթիին դա է եղել հրաբխի բերանը, այդտեղից է դուրս ցայտել ստորերկրեայ վիժւածքը: Սառցարանների տակից հոսում են գետակներ, որոնք իրանց խուլ զոյգոցով կարծես ազատութիւն են հայցում անողոք բնութիւնից:

Արագածի ստորոտից սկիզբ են առնում Գեօզայրաբայի, Համբերդի (որը ձգւած է մինչև Բիւրական), Ղազնափարի, Մանթաշի և Բաղարձուղի ձորերը, որոնցից իւրաքանչիւրի միջով հոսում է մի փոքրիկ գետակ: Գետակներից ամենանշանաւորներն են Ղարանդու և Դալի չայ:

Փոքրիկ գագաթի վրայ նշմարուած է Պաստուխովի*) կանգնեցրած կուրգանը, սակայն նրա մէջ չըկար ոչ օդաչափը և ոչ էլ ջերմաչափը: Երևի գոեհիկ մարդիկ գողացել են:

Ժամը 12-ին իջանք փոքրիկ գագաթից և սառցարանների վրայից սողալով, դիմեցինք դէպի ամենաբարձր գագաթը: Անկախելի է նկարագրել այն բոլոր գժւարութիւնները, որ հանդիպում էինք ճանապարհին: Բարբախտաբար հով ու գով օդը, ջինջ ու սառնորակ ջուրը կարծես շարունակ նոր ոչո՛ք, նոր եռանդ էին մատակարարում մեզ: Ժամը 5 1/4 լսեց հրացանի սլաքիւնը. մենք արդէն ամենամեծ Արագածի վրայ էինք: Այստեղից երևում են նոյն տեսարանները, նոյն վայրերը, սակայն օդն աւելի ցուրտ ու նօսը է և գագաթի մակերևոյթը չափազանց նեղ և անյարմար է կանգնելու համար, այնպէս որ ամեն րոպէ մարդը ենթարկւած է այս կամ այն վիճն ընկնելու վտանգին: Ահա այդ պատճառով հազիւ 1/4 ժամ մնացինք այդտեղ և նորից նոյն գժւարութիւններին չաղթահարելով, լետ վերադարձանք, մեզ հետ բերելով անջնջելի տպաւորութիւններ, վեհ չիշողութիւններ...

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Օ Հ Ն Կ Ը Ն

ԽՐԱՏՆԵՐ ԴՈՅՇԱԿԻՆ ԵՒ ԾՆՆԴԿԱՆԻՆ

- 1) Երբոր դաշեակը գնում է ծննդկանի մօտ, պէտք է լաւ լացելի, մաքուր հագնելի, մանաւանդ ձեռքերը պէտք է տաք սապանջրով լւանայ:
- 2) Եթէ դաշեակը մեռած երեխայ բերող կնոջ մօտից նոր է դարձել, մի շաբաթից վաղ չըպէտք է գնայ ուրիշ ծննդկանի մօտ: Այս պէտք է դիտենան տանեցիք, որոնք դիմում են դաշեակին, որովհետև այդպիսի դաշեակն անզգայի կերպով կարող է վարակել ծննդկանին:
- 3) Դայով ծննդկանի մօտ, ամենից առաջ պէտք է նրան լողացնէ տաք ջրով, հազցնի մաքուր սպիտակեղէն, մաքուր տեղաշոր պատրաստէ նրան: Մարդիկ տեղեկացան, որ ամեն մի անմաքրութիւն շատ հեշտ կըկպչի առաջնամուտքին, իսկ այդ տեղից արգանդին: Արգանդը վարակելով առաջանում են զանազան կանսցի հիւանդութիւններ: Ասել է թէ ծննդկանի շուրջը պէտք է մաքրութիւն տիրէ, իսկ այս առաջին պայմանն է: Նա պէտք է ծնի մաքուր տեղում հեռու կեղտաջրերի փոսից կամ աղբից: Գիւղերում սովորութիւն կայ, որ ծննդկանը ազատում է զոմբերում, որ շատ վատ է:

*) Դա առաջին անգամ Արագածի գագաթը բարձրացել է 1893 թ.

4) Առանց կարևորութեան դաշեակը չըպէտք է ձեռքը ներս տանի. այս պէտք է անել որքան կարելի է ուշ-ուշ և այն մաքուր ձեռքով: Եթէ երկուսը կանոնաւոր է, կինը կըծնի առանց դրան, իսկ եթէ անկանոն է, անկանոնութիւնը պէտք է փորձով հասկանայ: Աւելի լաւ է ձեռք չըտալ ծննդկանին, այլ սպասել. մինչև որ ժամանակը կըհասնի, երեխան աշխարհ կըգայ:

5) Ծննդկանը չըպէտք է դիտմամբ ուռչի ու փբւի, իբր թէ գրանով կճկումները աւելի կանուխ և զօրեղ լինեն, այսպիսով նա իզուր տեղը ոչո՛քից կընկնի և այնուհետև ոչո՛ք չի ունենալ դիմանալու, երբ այդ աւելի կարևոր է:

6) Երկուսի սկզբում կինը կարող է պտտել այնքան, մինչև որ գօտկատեղում սաստիկ ցաւ կըգգայ, այն ժամանակ դաշեակը պէտք է պարկեցնէ ծննդկանին կողքի կամ թիկունքի վրայ, լինայէս նրան աւելի յարմար է: Դաշեակը պէտք է նայէ, արդեօք ջուր չի գալիս: Երբ որ ջուրը կտրոււմ է, բոլորովին տեղից վեր կենալ չի կարելի: Պէտք է պարկած լինել, նրա համար որ քիչ լինեն փօրի կճկումները: Երեխան առանց այդ էլ շատ է ներքև սեղմում, ման գալով ու կանգնելով էլ աւելի կըլինի: Այդ տեսակ կճկումով սաղմնաբոյնը (գլխաբուշտ) կարող է տրաբւել վաղաժամ և ինչպէս արդէն ասուեց, երկուսը կրօնի աւելի զօրեղ: Բացի դրանից սաստիկ սեղմումից երեխան կարող է դուրս թռչել հրացանի սլաքիւնի նման:

Եթէ երեխան սաստիկ ուժով յոյս աշխարհ է գալիս, դրանից կարող է շէքը պատառւել: Կանգնած տղաբերողներից շատ քիչ կըպատահի, որ շէնքը պատուած չըլինի, համարեա ամենքինն էլ պատուած է, իսկ այս խիստ վտանգաւոր է: Նախ և առաջ պատուած տեղին հեշտութեամբ կըկպչեն անմաքրութիւններ, և ծննդկանը կըհիւանդանայ: Երկրորդ՝ երբ ծննդկանը կանգնած է լինում, երկար ժամանակ մուտքը կըցաւի և կըսկսի յորձուք թափել: Վար սեղմելուց արդանդը կիջնի և կարող է դուրս գալ, վերջին դէպքում ման գալիս կամ աշխատելիս նրան կըբււի և կըկպչեն շորերին, կամ ազդրներին ու կըհարւի, որից բորբոքելով վէրք կառաջանայ, փորը շարունակ կըցաւի և մէզը կըկապւի: Իսկ այդ բոլոր չարչարանքները կինը կըլրէ մինչև գերեզման: Այս պատճառով պէտք է զգուշանալ և կանգնած կամ նստած չըծնել, մանաւանդ առաջին անգամին:

7) Առաջին անգամ ծնելն աւելի դժւար է: Այն ժամանակ ամեն ինչ պինդ է, ամուր, անցքը լայնացած չէ և սովոր չէ ծնելու: Կանոնաւոր ծնունդը տևում է 20 ժամ, երբեմն աւելի քիչ, երբեմն աւելի շատ: Եթէ մի օրւայ մէջ կինը չազատեց, պէտք է դիմել մանկաբարձուհուն կամ բժշկին: Այն կինը, որ ծնել է մի քանի անգամ, նա կազատի աւելի շուտ և հեշտ և երկուսը կըվերջանայ 12 ժամում. շատ անգամ աւելի շուտ, բայց և այսպիսի կնոջը հարկաւոր է բժշկի կամ մանկաբարձուհու օգնութիւնը, եթէ նա տանջւում է և չի ազատել կէս օրւայ մէջ: Պատահում է, որ մինչև կըգայ մանկաբարձուհին՝ կինը կազատւի, այդ խօսմ աւելի լաւ:

8) Երբ որ ծննդկանը պարկեց, դաշեակը պէտք է տեսնէ թէ երեխայի գլուխը չի երևում, եթէ երևում է, պէտք է մաքուր ձեռքով սեղմէ շէքը, որպէս զի չը-

պատուի երեխայի ոչ ժից: (Ձէք է կոչուում առաջնամուտքի ներքին մասը):

9) Կարող է պատահել, որ առաջնամուտքը կրպտոււի և այն պոուշուութեամբ. այս այն ժամանակն է լինում, երբ երկուսն էլ շուտ է սկսում և կծկումները շատ ուժեղ են լինում: Այս ժամանակ պէտք է բժիշկ հրաւիրել, որ կարէ պատուած տեղը, որ յետոյ կրսողանայ և կրդառնայ առաջւայ նման: Պատուածքը պէտք է իր ժամանակին նկատել և առաջն առնել:

10) Երբ երեխան լույս աշխարհ գուրս կըզայ, դայեակը պէտք է վերցնէ նրան, և ամենից առաջ մատով բերանը սրբէ մաղասից: Երբ երեխան կ'աղաղակէ, պէտք է կապէ պորտը, փաթաթէ նրան, տաք բարուրով ծածկէ ու դնէ մի կողմ: Պորտը պէտք է կապել երկու տեղից և միջից կտրել: Եթէ պորտը վատ է կապուում կամ երեխան արիւնաքամ կըլինի, կամ մաշը շատ արիւն կըկորցնի, նայելով թէ որ ծայրն է վատ կապուած:

11) Երեխայի դուրս գալուց յետոյ դայեակը պէտք է շօշափէ արգանդը, թեթև կերպով տորիէ ձեռքով այնքան, մինչև դուրս կըզայ ընկերքը: Սրանից յետոյ դեռ կէս ժամ պէտք է շարունակել շփումը և չըպէտք է հեռացնել արգանդից ձեռքը, որպէս զի չըթուլանայ, այլ աւելի լաւ կծկուի:

12) Երբ որ ընկերքը դուրս եկաւ, պէտք է լողացնել ճննդկանին, մաքուր շապիկ հագցնել, ծածկել և թողնել նրան քնելու: Նոր ազատուող կնոջը սաստիկ

բարնացնել չի կարելի, այդ պէտք է ինն օրից յետոյ:

13) Պատահում է երբեմն, որ երեխան մեռած է թուում, չի աղաղակում, չի շնչում և կամ շարժուում: Այս երևույթը մահուան տեղ չըպէտք է ընդունել: Այդպիսի երեխային կարելի է կենդանացնել: Այդ բանի համար ամենից առաջ հարկաւոր է բռնի շունչ քաշել տալ, բայց այս անելու է պորտը կապելուց առաջ: Իսկոյն պէտք է մաքրել բերանը մաղասից և յետոյ քին լաւ շրմփացնել, որպէս զի լաց լինի: Լալու համար նա լացն բաց կ'անի բերանը և իտոր շունչ կըքաշի: Եթէ այս միջոցը չի օգնիլ, պէտք է մի աման սառն ջուր վերցնել և քիչ քիչ լցնել երեխայի կրծքին, սրանից էլ նա կըշնչէ և կաղաղակէ: Եթէ այնուամենայնիւ չի աղաղակիլ կամ շարժուիլ, պէտք է պատրաստել մի տաշտ սառն ջուր և մի ուրիշը տաք, ապա կապելով ընկղմել երբեմն տաք և երբեմն սառն ջրի մէջ: Իիտէ ամեն մարդ, որ սառն ջրում մարդ կըսրսփայ: Այսպէս էլ կըպատահի երեխայն, եթէ նա կենդանի է: Այս գործողութեան ժամանակ պէտք է բռնել երեխայի կուրծքը, փորին մօտիկ, երբեմն հուպ տալ և երբեմն ազատ պահել, որ կուրծքը լայնանայ կամ սեղմել, ինչպէս այն տնում է մարդ շնչելիս: Ըօձել չի կարելի երեխային, որովհետև այս պահանջում է շատ մեծ զգուշութիւն և պէտք է գիտենալ ձևը: Ով որ անկարող է և անվարժ, ձօձելու ժամանակ երեխան կըմեռնի:

(Կըստուումակի)

Ինքնուրոյնութիւնը

ՄՄՄՄՄՄՄ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՃ

Ընդհանրապէս մամուլի և գրականութեան նկատմամբ ենք ինքնուրոյնութեան նիւթ տալ ժողովրդին, սնունդ տալ նրա հոգեկան աշխարհին, մտքին, սրտին, երևակայութեանը: Ինչ որ գրուում ու տպագրուում է, գլխաւորապէս չիշեայ նպատակին է ծառայում:

Բայց որպիսի նիւթ պիտի տալ ընթերցողին մամուլը և գրականութիւնը:

Մարդու հոգեկան սնունդի համար գոյութիւն ունեն նոյնքան բազմատեսակ նիւթեր, որպէս և մարմնական սնունդի համար: Արդ՝ եթէ մենք հարց դնելու լինինք, թէ ինչ պէտք է տալ մարդկանց ուսելու, մեզ պատասխանողները կարող են անթիւ, անհամար ուտելիքների և կերակուրների անուն տալ, մսեղէն, կաթնեղէն, բուսեղէն... Իսկ եթէ մենք հարցը աւելի սահմանափակենք և հարցնենք, թէ որպիսի սնունդ պէտք է տալ երեխային կամ հիւանդութիւնից հազիւ բժշկուած անհատին, կամ ստամոքսի խրոնիկական խանգարում ունեցողին և այլն, այն ժամանակ չի կարելի առանց այլ և այլի համարել բոլոր

կերակուրները, այլ հարկաւոր կըլինի նրանց մէջ ընտրութիւն անել: Սահմանափակ հարցի պատասխանն էլ պէտք է սահմանափակ լինի: Այդ տրամաբանական օրէնքներից մէկն է:

Այդպէս էլ, եթէ հոգեկան սնունդի մասին խօսելով, հարցը վերաբերում է մի որոշ ժողովրդին, որոշ ժամանակամիջոցում, չի կարելի տալ թէ նրան կարելի է տալ ամեն մի նիւթ առանց բացառութեան, այլ պէտք է ըստ կարելոյն պատշաճ ընտրութիւն անել: Թմրած ժողովրդին պէտք չէ ափիօն ընդունել տալ, որ նրան աւելի թմրացնէ: Իսկ մի թեթևասովի, թեթևամիտ երիտասարդութեան, որ հաւատացած է, թէ ինքն ամեն բան գիտէ, կարելի է առաջարկել այնպիսի նիւթեր, որոնք կըհամեստացնեն նրան, կըստիպեն աւելի խիստ վերաբերել դէպի իր էութիւնը: Հազիւ մտածել սկսած հասարակութեան պէտք չէ առաջարկել այնպիսի նիւթեր, որոնց վրայ դարբերով գլուխ են կոտրել անթիւ գիտնականներ և փիլիսոփաներ, առանց որևէ եզրակացութեան հասնելու: Դեռ մարտողութիւնը թող ժողովրդին պէտք է տալ թեթև, հեշտ մարտող ուտելիքներ, նոյն իսկ

կաթը լսմացնել, թերևս մի փոքր շաքար խառնելով նրա մէջ աւելի ախորժեղի դարձնելու համար:

Հոգեկան նիւթերը երկու տեսակ են:

1) Նիւթեր, որոնք յատկապէս վերաբերում են մի որոշ ժողովրդին, կազմում են նրա կեանքը, նրա ինքնուրոյն հոգեկան աշխարհը: 2) Նիւթեր, որոնք հաւասարապէս վերաբերում են բոլոր ազգերին, պատկանում են ընդհանուր մարդկութեան, արտացոլում են հանրամարդկային կեանքը: Մինչև իսկ զուտ գիտնական նիւթերը, որոնք ըստ երևույթին համաշխարհային բնաւորութիւն ունին, իրօք նոյնպէս կարող են լինել կամ սահմանափակ ազգային, տեղական, կամ թէ հանրամարդկային: Օրինակ հայոց աշխարհի տնտեսական կեանքի ուսումնասիրութիւնը կարելի է վերաբերել հայկական գիտութեան: Եւրոպական գիտնական շրջաններում շատ անգամ գործ են ածում հետևեալ խօսքերը: անգլիական փիլիսոփայութիւն, գերմանակ մանկավարժութիւն և այլն: Եւ այդ խօսքերը հիմքեր ունին: Աղամ Սմիտ, որ քաղաքատնտեսութեան հայրըն է համարուում, իր տնտեսական տեսութիւնները արձարձելիս ի նկատի է

առնում շարունակ իր հայրենի՝ անդ-
լիական հանգամանքները, անգլիա-
կան արգիւնագործութիւնը, անգլիա-
կան վաճառականութիւնը: Երբ մարդ
լսում է գերմանական պրոֆեսորների
դատախօսութիւնները, ամեն ընդհանր
գրում է որ պրոֆեսորը ի նկատի ու-
նի իր գերմանացի լինելը, Գերմա-
նիայում գտնւելը: Բայց չըհեռանանք
խնդրից:

Մի ազգի գրականութեան և մա-
մուլի համար առաջին տեղը պիտի
բռնեն բուն ժողովրդական նիւթերը,
մեր կեանքը, և նրա երևոյթնե-
րը: Բայց, ի հարկէ, չէ կարելի բա-
ւականանալ սրանով: Այլ ի նկատի ու-
նենալով, որ ազգն էլ մարդկութեան
մի ճիւղն է, մի անդամն է, պէտք է
զբաղեցնել նրա սիրտը, միտքը. ուշա-
դրութիւնը հանրամարդկային նիւթե-
րով, լինեն սրանք գիտական թէ
կենսական: Ուրիշ խօսքով ասած՝ մա-
մուլի և գրականութեան սաղմը, ծու-
ծը պիտի կազմեն ինքնուրոյն նիւթե-
րը, հարազատ կեանքը, հային հոգեպէս
կրթելու համար նախ և առաջ պէտք է
քննութեան առարկայ դարձնել նրա
սեպհական կեանքը, նրա էութիւնը,
վիճակը:

Եթէ մի մամուլ կամ գրականու-
թիւն երկրորդական տեղ է տալիս
այդ նիւթին և գլխաւորապէս պաշտ-
ում է օտար նիւթերով, կընշանակէ
նա կանգնած է գլխի վրայ, փոխա-
նակ ոտների վրայ կանգնելու: Այդ
խօսքերը առիթ է տալիս մեզ ասե-
լու այն անհերքելի փաստը, որ մեր
ներկայ մամուլը և գրականութիւնը,
կարծես թէ իր իսկական նշանակութիւ-
նը մոռացութեան տուած լինի: Վերցնում
ես հաջոց լրագիրը ձեռքէ՝ ինչ նիւ-
թեր ես գտնում նրա մէջ գլխաւորա-
պէս. խորհուրդներ Սպանիային, պա-
տերազմների նկարագրութիւն, նամակ
Ամերիկայից, Բիսմարկի դատավճիռը...
և ինքնասպանութեան վերաբերեալ
ուսումնասիրութիւնները. ասես թէ,
որ հայն է ինքնասպանութիւն գոր-
ծել, որ սրանից էլ մի կարևոր
խնդիր ես դարձնում: Իսկ բուն հաջոց
կեանքից, կամ հէնց հարևան ժողո-
վրդների կեանքից տալիս են մի քա-
նի անհամ լուրեր, չնչին-մնչին թըղ-
թաղցութիւններ: Չաբաթներով սպա-
սում էք մեր հէնց առաջնակարգ քա-
ղաքներից որևէ լուր տեղեկութիւն,

որևէ արժէք ունեցող նկարագրու-
թիւն, ուսումնասիրութիւն, բայց
ինչ... մէկ էլ տեսար մի տեղեկեցիոց
քղբակցո: Բի՛ն, որի կէսը գրպար-
տութիւն է, կէսն էլ անկապ դատո-
ղութիւններ: Մեր մամուլը տանեակ
տարիներում ստեղծեց անճաշակ, ան-
զարգացած և ճոյ թղթակիցների մի
ահադին բանակ, որի տեղը աւելի լա-
կըլինէր ունենալ մի քա՛նի հատ շնորհ-
քով թղթակիցներ: Հէնց մամուլի գե-
կավարները իրանք, նստած Թի/լի-
սում, մեր քաղաքայրթութեան կեն-
դրոնում, չեն կարողանում ինքնու-
րոյն մի արգիւնք ցոյց տալ: Մի խըմ-
բագրութիւն, որ ասան հոգի փափուկ
ուռճիկներ ստացող ղեկավարներ ունի,
կարողանում է տալ շաբաթական ըն-
դամներ մի երկու հատ թխած առաջ-
նոյ գոյներ և ուրիշ ոչինչ: Տասն հո-
գին չեն կարողանում տալ մի հատիկ
Գրիգոր Արժրուու տուած նիւթի քա-
ռորդ մասը: Այդ դեռ քանակութեան
կողմից: Իսկ որակութեան մասին ոչ մի
համեմատութիւն անել չէ կարելի:

Նոյնքան թոյլ է, ինքնուրոյնու-
թիւնից գուրկ է ներկայումս մեր գրա-
կանութիւնը, Ինքնուրոյն գրածքներ
լոյս չեն տեսնում, կամ տեղական
կեանքը իրանց փայլուն կամ մութ
կողմերով չեն արտացոլում գեղար-
ւեստի մէջ: Հայ կեանքը չի հետազօտ-
ւում, չի ուսումնասիրում: Այստեղ և
այնտեղ անհամեմատ աւելի լոյս են
տեսնում քաղցրամակակ վէպեր, պիես-
ներ... Բանն այնտեղ է հասել, որ
մեր միակ հրատարակչական ընկերու-
թիւնը, այնքան անճաշակ, անգիտակ-
ցական, ուղղակի բթամիտ ուղղութիւն
է ստացել, որ անճոռնի թարգմանած
գրածքներին եռապատիկ աւելի է
վճարում, քան բուն ժողովրդական
նիւթերին: Այդ արգէն խաչտառակու-
թիւն է:

Ամփոփում ենք և շեշտում մեր ա-
սածը: Մենք բոլորովին դէմ չենք
օտար մտքի արտագրութիւններին և
օտար իւլթերին: Սրանց մեծ ու կա-
րևոր նշանակութիւնը հասկանում
ենք և ընդունում: Բայց մեր մամուլի
և գրականութեան ապագան կախուած
է այն հանդամանքից, թէ որքան
ինքնուրոյն կրլինի նա: Թէ կուզ
թոյլ լինի, տակաւին անճաշակ լինի
մի գրածք, միայն թէ նա ինքնուրոյն
լինի, հարազատ լինի:
Մենք գեռ կըգառնանք այդ խընդ-
րին: Ս. Թ.

ԹԻՔԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻՍ

Նստարանի վրայ փուսած խօսում էի
Ջէմալէի հետ, որ մեզմութեամբ ճրգ-
լած էր թիկնաթոռին մէջ: Ինչ գե-
ղադիտական, ինչ հրաշալի է ամառ-
ւայ գիշերը Մեծ-Աղզում: Վերջապա
մարմրող ճառագայթների տակ, ջինջ ու
կասկած օդով շրջապատած, փայլուն
ճովի ալիքը Փշփշալով լիզում է ճովե-
գերքը: Երեկոյեան մեղմ քամին հան-
դարտ խող էր անում թիւրք գեղու-
հու հարուստ գիտակների հետ:

Ջէմալէ-հանըմը իր նախնական կըր-
թութիւնը ստացել է Աբ-Սէրայի Իգա-
գիէ ուսումնարանում, մոլեռանդ միւզ-
գէրէսներից, որ բոլորովին նրան բարո-
յապէս փչացրած յանձնում են իր մօ-
րեղբորորդի Բիգա-բէյին, որ այժմ իր
ամուսինն է: Նրա մօտ սովորում է
թիւրքերէն և Ֆրանսերէն լեզուները,
և երկու տարի է որ աշխատակցում է՝
իր ամուսնու խմբագրած «Վանգարե»
շաբաթաթերթին: Նա բանաստեղծ է
բառի իսկական նշանակութեամբ, մի-
չև իսկ իրական կեանքի և ղժբախ-
տութիւնների վրայ էլ բանաստեղծի
աչքով կընայի: Նա մի տեսակ իղէալ
է, իր ամուսնուն պաշտելի ու պաշ-
տող, գրականութեան սիրահար, գոր-
ծելու բուն եռանդով վառւած, թիւրք
կիների սղատութեան համար եռան-
դուն գործող: Նա անխոջ աշխատող
է, գրում է վէպիկներ, պատկերներ,
բանաստեղծութիւններ: Նրան ուղղու-
թիւն է տալիս ամուսինը, որ նոյնքան
զգայուն բանաստեղծ է որքան ինքը,
թէ համալսարանում (Սորբօն, Պարիզ),
լսել է բնական գիտութիւններ, մաս-
նաւորապէս նաթիւրալիզմ:

Ջէմալէն այդ ժամում քննադա-
տում էր Ֆրանսուա Կոպպէի «Նախան-
ձորդներ» վէպի թարգմանութիւնը,
որ իր կարծիքով շատ անչաջող
էր կատարւած: Երկու ժամից աւելի
էր, որ խօսում էինք, երբ Սահիլն
գալով մեզ յայտնեց, որ հիւրերը հա-
ւաքել են: Յամ իջանք, նա գնաց
հարէմ, ես անցայ Սէլամիլի (տղա-
մարդկանց) բաժինը:

Փամը 8 1/2 էր. Սահիլն ուղիղ էր
ասել, դահիճը լիքն էր հրախրած-
ների բազմութեամբ: Ծանօթներիս
բարևեցի, մի քանի անճանօթների
հետ ծանօթացայ: Երբ բոլորովին հան-



Արիստոկրատական շուն

դարուեցի, նոր գիտեցի մի բան. հրեբերի մեծ մասը երկտասարդներ էին, բարձրագոյն ուսում ստացած կամ բարձրագոյն ուսումնարանի ուսանողներ: Իսկ ջահիլներ բարձրացանք վերի չարիի սրահը, որտեղից և տարածւեցան ճոխ կահաւորւած սենեակները խումբ խումբ, այս ինչ լրագրի աշխատակիցները այս սենեակում, այն ինչ պաշտօնատան ծառայողները միւս սենեակում, քէ՛վի մարդիկը մի ուրիշում: Մեր ժողովը կառավարում էր իրա բէջը, տանտիրոջ փեսան, Ջէմալի ամուսինը, յայտնի գրագէտ և հրատարակիչս: Թիւրքիացում մամուլի համար գործողները դեռ այնքան քիչ են, որ արւեստագէտները միանգամայն և արհեստատրներ են, գրական գեղեցկութեան հետ և գործածում են առաջնորդողի ծամած և տախիլ լեզուն:

Այնտեղ կային պահպանողականներ և ապատականներ խառն, բայց ընդհանրապէս նրանք միմեանց չարգում ու իրարու ասածների հետ շատ սիրով էին վերաբերում: Ծայրայեղ յետադիմականներն ու յառաջադիմականները իրար հետ համերաշխ էին: Միթէ այնքան բարոյական բարձր կրթութիւն ունին թիւրքերը ուրիշ ազգերից, որ պարզով իրանց միեւնոյն իղէալը ունենան ու կուսակցական նեղփրտ ու ցած հոգիի վնասակար հետեանքը, հետո են փախչում նրացից: Չըզիտեմ. գուցէ այդ բանի պատճառը բնական դարձած թրքական կեղծաւորութիւնն է:

Քաղաքական, գրական, գիտնական այլ և այլ խնդիրների վրայ վիճում էին այլևայլ խմբեր տարբեր մտածութիւններով: Նրանց խօսքերը սաստիկ ոգևորող են, նրանք խօսում են, պչպէս ասած, ճնշած դասակարգի մասին և յորդորում են միմեանց, խոստանում են գործել, նրանց իրանց դառը վիճակից ազատելու համար:

Երկար վիճում էինք առանց եզրակացութեան հասնելու, երբ ծառան յայտնեց որ ընթրիքը պատրաստ է: Ճոխ ու հարուստ էր սեղանը, նրա վրայ երևում էր թրքական և ֆրանսիական խոհարարական ճարտարագործութեանց ցուցահանդէսը:

Չընայած որ թիւրքերը ամեն բան ֆրանսիականից են առել, չունեն նր-

րանց գործելու եռանդն ու փափաքը: Երբեմն ֆրանսիական փութկոտութեամբ մեծ գործերի են ձեռնարկում, բայց շուտ երեսի վրայ են ձգում իրանց սկսածը փրկսոփաչութիւններ անելով: Արդե՞ք նրանք էլ հայի նման չեն ուզում մի գործ շարունակել. միթէ փստահ չեն նրա յաջողութեան, թէ իբրև դրական մարդիկ երկար մտածում, ծրագրում և յետոյ գործելու ձեռնարկում, կամ գուցէ ոչինչ գործել չեն ուզում:

Այդ չըզիտեմ և չեմ էլ կարող գիտենալ, որովհետև ազգու փաստեր չունեմ ինձ համոզող:

Նրանց մասին ինչ որ գրում եմ՝ Ջէմալ-հանրմի խօսածներն է: Ահ, նրանք սկեպտիկներ են:

Քիզա-բէջը իմ հարցերիս պատասխանում է այսպէս.

«Այն կեղեքը (ճակատագիր), որ մի ժամանակ արարներին այնքան բարձրացրեց ու փառաւորեց, որի գիտակցութեան տակ նրանք տիրեցին Սպանիային, Աֆրիկէին և Ասիային, այժմ միևնոյն գիտակցութեամբ անկործութեան է դատապարտում մեզ և բարոյապէս փչւնցում մեր եռանդը: Այն ժամանակ մահմեդականը ասում էր. «Եթէ ճակատիս գրած է մեռնել, պատերազմի մէջ էլ լինեմ պիտի մեռնեմ, անկողնուս մէջ պառկած էլ լինեմ պիտի մեռնեմ, ուրեմն աւելի լաւ է իբրև «խոսովանող» մեռնել: Մեր հայրերը, նրանց թոռները ասում էին. «Եթէ ճակատիս գրւած է Մեծ-Վէզիր լինել, աշխատեմ թէ յաշխատեմ պիտի լինեմ, իսկ եթէ ճակատիս գրւած է միշտ աղքատ մնալ, տանջել, եթէ կովի, իշի նման էլ աշխատեմ կըմնամ միշտ նոյն աղքատը ու միշտ նոյնպէս կըտանջւեմ, ինչպէս էշը միշտ էլ էշ է մնում, որովհետև Աստուած նրան ստեղծել է էշ լինելու համար: Այդ ճուշտութիւնը հետզհետէ աւելի ամրացել է մեր հայրերի մէջ և վերջապէս բնական է դարձել: Այժմ մենք, ճոյ հայրերի երիտասարդ որդիներս, աշխատում ենք մեզանից թօթափել այդ մահացու անհողութիւնը, որ ժառանգական ցաւ է, նա այնպէս է ծծւել մեր ջիղերից, ինչպէս աւիշը բոյսի ջիղերից»:

Գ. Սդիկեան

Գիւղացու կարիքը

Տնտեսական դրութիւնը որևէ հասարակութեան բարձրացման ամենագլխաւոր միջոցներից մէկն է: Հասարակութիւնը եթէ սպահովւած է տնտեսապէս, հետզհետէ կըշտաջադիմէ բազմակողմանի կերպով, յառաջ կըգազ գաղափարական շարժում, ուսումնական և քաղաքակրթական հիմնարկութիւնները կըբարւոքեն, կըճաղկեն, որից և նրա մտաւոր, ստեղծագործող ոյժը, ընդհանրութեան զարգացման արտաչափից տարրը, օգտուելով խաղաղ ու անզորը վիճակից, կըվերածնէ, ասպարէզ կըհանէ նորանոր ոյժեր և իր բազմադիւն վաստակով զգալի ժառանգութիւն կըթողնէ ապագայ սերնդին:

Իսկ մասնաւորին: Մեր գիւղական տարրը ըստ մեծի մասին պարապում է երկրագործութեամբ: Երկրագործութիւնը՝ տնտեսական դրութեան բարելաւութեան այդ անհրաժեշտ միջոցը այսօր խիստ կաղում է մեր մէջ: Այսօր մեր անմխիթար գիւղացին ձեռք է առնում այն գործիքները, գործադրում է այն միջոցը հողը վարելու գործում, առաջնորդւում է այն գաղափարներով իր արհեստի վերաբերմամբ, որով հալ ու մաշ են եղել սրանից տասնեակ դարեր առաջ իր նախնիքները: Ինչո՞վ է բարեփոխել նա իր վիճակը այդ կողմից—համարեա ոչնչով: Միթէ մեծ և անկամ չիշելու արժանի բարեփոխում է, երբ հասարակ արօրը տեղի է տւել աւելի բարդ կազմ ունեցող արօրի և վերջապէս գութանի: Գործի միանգամայն անբարեկարգ ընթացքը չէ կարողանում գիւղացուն բաւարարութիւն տալ հետեւապէս այդպիսին անկարող է փոքր ի շատէ լսելահաս գիւղացուն զրաւել ու կապել իր հողի, հայրենիքի հետ: Եւ այսօր ճարահատ գիւղացին, իր ոսկեպատառ ընդարձակ հողերը անտէր թողնելով, քաղաք է վազում արցունքը աչքերին՝ յուսալով մեծ վարձատրութիւն ստանալ:

Արդե՞ք ո՞ւմ չէ յայտնի պատմութիւնից, որ գաղթականութիւնն ապագութեան կործանման ամենագլխաւոր միջոցներից մէկն է: Ո՞վ չէ ցաւակցում կարգալով հայոց պատմութեան

այն էջերը, որ պարունակում են բիւր աղէտալի տեսարաններ - պարսկական, չուսկական, լեհական, հնդկական և այլ վայրեր ցիր ու ցան եղած գաղթականութիւնների մասին: Այն, զա մի պատահական երևոյթ չէ եղել մեր մէջ, այլ որպէս մի անհրաժեշտ չարիք շարունակ կրկնել և մինչև օրս էլ շարունակում է:

Աիշտ այդպէս, ինչպէս որ ժողովրդի մի ամբողջ քանակութիւն հեռանալով ընդհանրութիւնից և բնականապէս մեծ վնաս է հասցնում վերջինիս, իր աշխատող ձեռքի վաստակը ուրիշին նւիրելով, այնպէս էլ անհատների կամ տասնեակների արմատախիլ լինելը գիւղից վնասը զգալի է դարձնում: Աշմարիտ, որչափ ցաւալի է, որ մատաղահաս տղայք իրանց թեթև գրագիտութեամբ այս ու այն աղաչի կամ վաճառականի հետ ընկնելով այլ և այլ մեծ ու շուրջ քաղաքներ, ետիջերինների նման երկար ժամանակ առանց ծնողի, բարեկամի մնալով, բարոյապէս փչանում են: Բնութեան հարազատ զաւակը, անմեղ, գէպի լաւը, առաքինին հակառակ պատանին կործանիչ շրջանում դառնում է մի խարդախ և անպէտք արարած, որը իր չեղաշրջած ուղեղում չառաջացրած մտածողութեամբ իր հասակակիցներին ևս վարակում է: Դեռ այսպիսի օրինակներ գուցէ փոքր համարէք, ընթերցող, աչքերնիս դարձնենք գէպի մոռացութեան տուած շինականներին և աւելի խորը թափանցենք:

Եթէ հեռուոր քաղաքներից մէկում նստող, գիւղացու մասին վերացական տեսութիւններ առաջարկող գործիչներից մէկը մի անգամ գիւղեր այցելէ, կրհասականաջ այն մեծ սխալը, որ ինքը և իր նմանները առանց իրանց եղբայրների վիճակը, ժամանակի համապատասխան պահանջը իմանալով շատ թուղթ են մրտտել, գիւղացու մասին գրելիս և շատ ժամանակ վատնել անկարևոր նիւթեր մշակելիս: Առաւել ևս, կըզարմանայ, երբ ցանկանայ իմանալ գիւղացոց իրանց բնակավայրի հետ ունեցած կապի, հայրենակիցների հետ ունեցած առնչութեան մասին: Երբ Նկատէ ուսումնասէր պարոնը, որ իր միս ու արիւն դարձրած գաղափարների հակառակ օրինակներ են տեղի ունենում գիւղական կեանքում: Երբ տեսնէ, որ 15-40 տարեկան

բոլոր հասակաւորները վարակած են օտար երկիրներ գաղթելու ակտով, և անգամ իգական սեռը:

Երևակայեցէք, որ հասուն և ընտանիքատէր մարդիկ զին ձգելով երկրագործական գործիքները, չուում, գալթում են առևտրական քաղաքները. ամբողջ օրեր նրանք տքնում, քրտնում են մի քանի կոպէկներ հայթայթելու համար: Այնուհետև բնութեան զրկում մեծացած ազատ գիւղացին թեքում, ծանուում է ամեն կողմ, իւրացնելով խաբեբայութեան, ստորաքարշուլթեան ու շողաքորթութեան ոգի: Այդպիսիները բաժանում են մի քանի տեսակի: Կիւնում են այնպիսիք, որ տարիներ անցնելուց չետոյ բոլորովին մոռանում են տուն, տեղ, ծնողներին և հայրենակիցներին ու անդառնալի կերպով անչաչտանում: Երկրորդ այնպիսիք, որ վերադառնալով հայրական գիւղը, նոր տարազի հաղուստով աշխատում են լրբաբար փառաւոր չալթանակներ տանել կանացի սեռի մէջ և այլ ակտով թէ շատերին դժախտացնում և թէ նոյնը կտակում են ընկերներին: Երրորդ այնպիսիք՝ որ վերադառնալով, վերջինիս հակառակ նախ իրանց ծածկում են բարոյական դիմակի տակ, ապա գիւղական շրջանում դիրք վայելելուց չետոյ պախարակում, արհամարում են գիւղական բոլոր սովորութիւնները, անգիր արած բառերի ճոռոմաբանութեամբ, ասելով. «Եղբայր, ձեզ նման տաւարած մի շինեմ ես իւեղն զգաներին, հեկց դուր էլ աշխարհից բէխաբար ետերի նման ինչեք վեր դառել ես յիմար գեղումը, մարդ իագւայ նման տեղը կըբողմի ետեղ վեր ընկնի: դիպի էլ յիմար եք»: Ահա իր ամբողջ գոյութեամբ գիւղին պատկանող երիտասարդ երկու տարուայ ընթացքում այնպէս է կերպարանափոխում իր ժառանգած հակումն ու տրամագրութիւնը, որ ոչ միայն բաւականանում է իր անձով, այլ և ցանկանում է գայթակղութեան քար դառնալով իր հայրենակիցներին ևս մատնել քաղաքային կեանքին: Այդպիսին շուտով ամուսնանում է և մի գոթախտին իրան կենակից անելով քաղաք է վերադառնում: Չորրորդ այնպիսիք, որ քրտնաջան աշխատանքից կամ անբարոյական վարքից հիւանդանալով գալիս ծնողների գլխին

ցաւ են դառնում, առողջանալուց էլ անպէտք դառնում գիւղական պարագմունքի վերաբերմամբ: Ահաւասիկ այս բոլորից պարզ է, որ գիւղացին գաղթելուց չէ ունենում որևէ միութարական վախճան:

Արդեօք, այս գոթախտ երևոյթը հում ուշագրութիւնն է հրաւիրել մինչև այժմ: Ի՞նչ է մտածում, ինչո՞վ է իրան երախտագէտ ճանաչում, մեր ներկայ իգէպիստ ձեւացող ուսանողութիւնը: Ո՞րտեղ են բախտ որոնում դրանցից այն անհատները, որոնք ծնւել, շնչել են այնտեղ, ուր իր նախահարք ականատես և ականջալուր են եղել այն սև օրերին, այն նախանձելի կեանքին, որի մէջ տառապելու չափ չարչարել են իրանց հայրերը, ազգակիցները: Իսկ այժմ նրանք ևս գէպի քաղաք են վազում, մոռանալով ամեն ինչ, քաղբջու նման ապրել են ցանկանում:

Ի՞նչ հաշիւ է տալիս իրան մեր ինտելիգենցիան. կատարում է նա բարեխղճօրէն իր դերը վերջինիս վերաբերմամբ: -Քան լիցի, անգոր դեկավարը բաւականանում է լոկ նրանով, որ հազազիւտ գէպքերում մի-մի ժողովրդական բողոքներն է լույս ընծայում և ասում հետեւեալը. «Այս էժանագին գրքերը հարկաւոր է տարածել ժողովրդի բոլոր խաւերում, մանաւանդ դրանցից գիւղերում ցրել այնպիսիները, որոնք այս կամ այն պարագմունքի վերաբերեալ մտքեր են պարունակում, թերևս գիւղացիք կարողանան օգտուել այդ գրքերից»: Ահաւասիկ և ազգի պարծանք կազմող դասակարգի տուած խորհուրդը գիւղացուն, այն գիւղացուն, որ «Պղնձե քաղաքի» և այլ այսպիսի յիմար պատմութիւնները գերադասում է մեր օգտակար համարած գրքերից այն գիւղացուն, որն այն աչքովն է նայում այդ գրքերին, ինչ աչքով որ նայում է որևէ հեքիաթի, առասպելի վրայ: Վերջապէս այն գիւղացուն, որ իր տնտես պատրաստականութեամբ միայն շօշափելի օգուտը նկատելու ընդունակութիւն ունի: «Տէէք, այն, տէէք ինձ աշխատող ձեռքեր, ուղեցոյց տւեմ ինձ ճակատագրուած պարագմունքին և բազմացնելով կենսական միջոցների թիւը, հարթելով տնտեսականապէս բարւոքելու ճանապարհը,

մեծ ուրախութեամբ ու յաջող քայլերով կը ձգտեմ մշակել և իմ մտաւոր աշխարհը: Տւէք ինձ տնտեսական բարարութիւն և ապա մտաւորի մեծ առաջարկներ արէք: Ահա այսպէս կը բողոք ազգի մեծաբանակ մասն դէպի իր լուսաւորած եղբայրները: Սակայն ո՞վ է լուսւմ նրա մշտտուն, արեքսալից աղաղակը, ո՞վ է մասնակցում նրա սև օրին. որ մէկը առաջի օրինակը հանդիսացաւ իր քրտնաշան աշխատանքով: Ֆրագաներ ջարդող, փափկասուն, ազատամիտ անւանած, բաց բուրժուացած ուսանողները մեծ անորժակով դէպի շոաց քաղաքներն են վազում, զղելով գեղատնտեսութիւնից և գեղական կեանքից: Իր անձուկ խեցիի մէջ թագնւած ինտելիգենցիան բաւականա՛նում է լոկ ճոճան գրչով, մի կողմից սիրահար հանդիսանալով եւրոպական նորանոր, բարձր գաղափարներին, միւս կողմից ազգի առաջնորդի տիտղոսով՝ արտաշատում երեւակայական ջերմ ցանկութիւններ, աղերսալից չորդորներ այս ինչ թմրած դասակարգին, ծաղրական խօսքեր շոացում այս կամ այն հոգեւորականի հասցէին:

Բ. Իսխանեանց

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

V

Աբխասանի կազմակերպութիւնը

Մարդիկ միացնելով իրանց ոչժերը, այսինքն միասին աշխատելով, ի հարկէ, կարողանում են աւելի մեծ գործեր կատարել: Մի քար, որ չէ կարող ոչ մի մարդ տեղից շարժել, տասն մարդ միանալով, կարողանում են ոչ միայն շարժել տեղից, այլ և գլորել ուր հարկաւոր է: Եթէ մի վաշտ զօրք ոչ մի կերպով չէ կարող թշնա իւր ամբողջ աննել, տասն վաշտ զօրքեր շատ հեշտութեամբ առնում են նոյն ամբողջը: Արեւմտ ակներև է ամենքի համար, որ միացած ոչժերով կարելի է լինում աւելի մեծ գործեր կատարել, քան թէ առանձնակի աշխատելով:

Բաց մի ուրիշ կարևոր կէտ կայ այստեղ, որ ինքն ըստ ինքեան աչքի չէ ընկնում: Ենթադրենք, որ մի մարդ կարողանում է օրական հինգ հատ ասեղ շինել: Արեւմտ քսան մարդը, ըստ երևույթի կարող են շինել օրական 5 + 20 = 100 հատ ասեղներ: Բաց

իրականութեան մէջ չիշեալ քսան մարդը շինում են ոչ թէ հարիւր այլ մի քանի հազար ասեղներ օրական: Այդ երևույթի պատճառն այն է, որ չիշեալ քսան հոգին, ոչ թէ գործում են իրարից անկախ, որպիսի դէպքում չէին կարող հարիւրից աւելի շինել, այլ գործը կազմակերպում են որոշ ձևով: Այդ բանորնից ոչ մէկը մի ամբողջ ասեղ չի շինում: Այլ մէկը նրանցից շարունակ երկաթ է հաղում, միւսը երկաթաթել պատրաստում, երրորդը չափում, չորրորդը կտրում, հինգերորդը գլուխը ծակում, վեցերորդը սրում և այլն: Եւ որովհետև նրանցից իւրաքանչիւրը շարունակ միևնոյն գործն է կատարում, ուստի ընդհանուր գործը աւելի արագանում է: Ամեն մարդ նկատած կը լինի, որ գործի սկսելը միշտ դանդաղ է լինում, իսկ մի անգամ գործը իր ընթացքի մէջ մտնելով նա աւելի և աւելի հեշտութեամբ է շարունակում: Բացի այդ՝ մի գործից դէպի միւսն անցնելը ժամանակ է պահանջում. վարպետը ստիպւած է լինում մի կարգի գործիքները տեղակել, միւսները ձեւք առնել, կամ թէ տեղը փոխել, ձեռները լայ և այլն: Այնպէս որ այստեղ թէ հոգեբանական և թէ տեխնիկական աւելորդ ջանքեր են գործ դրւում, որոնց մասին մանրամասն խօսելը դեռ մի կողմն ենք թողնում: Բաց իրողութիւնը ամեն մարդ տեսած կը լինի իր կեանքում: Նոյն բանը կարելի է տեսնել, օրինակ մի շէնքս կառուցանելու ժամանակ: Մէկը քար է տաշում, միւսը գետինն է փորում, երրորդը հող է մաղում, չորրորդը ցեխ է պատրաստում, հինգերորդը ցեխ է կրում, վեցերորդը որմնագրին քարեր է տալիս, եօթներորդը (որմնագիրը) պատ է քաշում և այլն: Արքան սիտի դժւարանար ու ձգձգէր գործը, եթէ միևնոյն մարդը ստիպւած լինէր համ բար տաշել, համ ցեխ պատրաստել, համ պատ քաշել ..

Գործի այդպիսի կազմակերպութիւնը տնտեսագիտութեան մէջ կոչւում է աբխասանի բաժանում: Արքան աւելի նուրբ է բաժանած լինում աշխատանքը, այնքան աւելի արդիւնաւէտ, յաջող է լինում գործը:

Նայն իսկ բնութեան զանազան երևույթների մէջ նկատւում է աշխա-

տանր բաժանումը: Ծառի զանազան մասերը կատարում են զանազան գործողութիւններ, բաց այդ զանազան գործողութիւնները իրար լրացնելով գլուխ են բերում մի ամբողջ գործ, որ նրանց կազմակերպած աշխատանքի արդիւնքն է: Ծառի արմատները նիւթեր են առնում հողի միջից և հաղորդում ամբողջ ծառին, տերևները նոյնանման դեր են կատարում օդի մէջ, ծառի բունը կանգուն է պահում ամբողջ ծառը և այլն. չըկայ ծառի ամբողջութեան մէջ ոչ մի հիւլէ, որ ամբողջ ծառի օգտին գործ չըկատարէր: Բաց իւրաքանչիւրը իր որոշ գործն ունի, այսինքն տերևը չէ կարող արմատի դերը կատարել, ձիւղը տերևի և բունը ձիւղի դերը:

Չատ աւելի նուրբ կերպով բաժանւած է աշխատանքը մարդու մարմնի մէջ: Ուղեղը, թոքերը, սիրտը ստամոքսը և այլ բազմաթիւ մասերը և զգայարանները իրանց որոշ դերերը ունին և երբէք մէկը միւսի դերը կատարել չէ կարող: Կարելի է ամենալաւ աչքեր ունենալ, բաց սրանք չեն օգնիլ յսոգութեանը, եթէ ականջները վնասւած են: Չատ ու շատ անգամ մարդիկ մեռնում են, երբ նրանց մարմնի բազմաթիւ գործունեւորից մի հատիկը վնասւում է: Մէկը կարող է շատ առողջ թոքեր ունենալ և խիստ զօրեղ ստամոքս, բաց եթէ սիրտը վնասւած է, նրա բանը բուրդ է: Այդ տեսակէտը ի նկատի առնելով, կարելի է ասել թէ երկու ճեսակ մահ կայ: Ոմանք մեռնում են այն ժամանակ, երբ նրանց բոլոր զգայարանները փչացած են, ուրիշ խօսքով ասած՝ ամբողջ մարմինը ուժասպառ է դարձած: Այդ մի բնական արդարացի մահ է: Բաց շատ ու շատ անգամ մեռնում է կենսալի մանուկը, և հսկայամարմին երիտասարդը, մի հատիկ զգայարանը վնասելուց և տանում է գերեզման առողջ ամբողջութիւնը: Այդպիսի մահը բառի բուն նշանակութեամբ մահ չէ, այլ սպանութիւն կամ թէ ինքնասպանութիւն: Աւստի հաստատ կարելի է ասել, թէ մարդկանց մեծագոյն մասը ոչ թէ մեռնում է, այլ սպանւում, մորթւում, զոհ է գնում...

Աշխատանքի բաժանումը մարդկանց մէջ մշտտուն, հաստատուն դառնալով, առաջ է բերում զանազան կո-

չուսներ (արհեստներ, պաշտօններ, մասնագիտութիւններ): Իւրաքանչիւր մարդ մի որոշ գործունէութեան նւիրւելով, կենդրոնացնում է իր ուշադրութիւնը նրա վրայ, լարում է իր ուշադրութիւնը նրան համապատասխան ուղղութեամբ և հետզհետէ աւելի ու աւելի աւազադիմում է, վարպետ է դառնում իր ընտրած ասպարիզում, վարժուում է իր կոչման մէջ և իր կոչումը փութաշանութեամբ և բարելոցութեամբ կատարելով, ծառայած է լինում ընդհանուր մարդկութեան, զգած է լինում իր լուծան ընդհանուր գանձանակի մէջ, Այդպիսի մի մարդը իր էութեամբ բարոյական անձնաւորութիւն է: Միայն թէ մեր վարպետը չըպէտք է բաւականանայ լոկ գործ կատարելով, լոկ օգուելով իր կոչման մէջ արդէն եղած փորձառութիւններին, նա չըպէտք է բաւականանայ «ձեւելով ու կարելով», այլ պիտի աշխատէ իր կողմից նրբացնել, բարձրացնել այն գործը, որին ինքը նւիրած է: Ահա այստեղից է բխում ընդհանուր քաղաքակրթութիւնը: Եթէ մի բժիշկ մի անգամ սովորած սկզբունքների հիման վրայ, բաւականանում է իր պաշտօնը կատարելով, և իր վարձը ստանալով, նա անարժան է դուրսորդ կոչւելու: Արժանաւոր բժիշկը պիտի աշխատէ իր փորձառութիւնից նորանոր եզրակացութիւններ անել և հարստացնել մարդկութեան բժշկական գիտակցութիւնը իր ուժերի չափ: Այդպէս պիտի լինի և արհեստաւորը, և ուսուցիչը, և քահանան և դերասանը, և գրողը... Ով այդպէս չէ, նա ոչ թէ կոչման է ծառայում, այլ մեխանիկական աշխատանք է կատարում: Իսկ ով որ կամաւոր կերպով (առանց ստիպւած լինելու) լոկ մեխանիկական աշխատանք է կատարում, նա կամ ապուշ է կամ աւագակ: Եթէ կօշկակարը չէ նայում իր կօշիկների վրայ, որպէս բանաստեղծը իր երգերի վրայ, նա անարժան է վարպետ կոչւելու: Օրհեստ և արհեստ բառերը միևնոյն ծագումն ունին և ըստ բովանդակութեան միևնոյնը պիտի լինին, այսինքն արհեստաւորը պիտի արհեստաւոր լինի:

Հ Ի Ղ Է



գ ե դ ա Ր Է ս

(Թարսնի, երածեսուրիսն)

Հայկ. ներկայացումներ Չուսում

Չորեքշաբթի օրը ներկայացրին Պարոնեանի «Բաղդասար աղբար» 3 արարւածով կոմեդիան և մի գործ. «Վարձու կին» վոդևիլը: «Բաղդասար աղբար» պիեսը մեր հայկական բեպերտուարի մէջ յարգելի տեղ է բռնում: Նա ունի բեմական արժանաւորութիւն, սրամտութիւն և ծիծաղաշարժ տեսարաններ:

Պիեսի հերոս—Բաղդասարի դերը կատարեց պ. Արուստ: Նա կատարելապէս իր դերի մէջն էր և մեծ հմտութեամբ և հիանալի կերպով կատարեց Բաղդասարի դերը: Նախ, պարոնը ինչպէս միւս ներկայացումների ժամանակ, այս անգամ ևս լաւ գիտէր իր դերը. այնուհետև ճիշտ ըմբռնողութեամբ և գիտողութեամբ ուսումնասիրել է Բաղդասարի տիպարը: Պ. Արուստի շարժւածքը, առողանութիւնը, գրիմը, դիմախաղը մտածած և խելացի էին: Ամբողջ ներկայացման ժամանակ հասարակութեան ուշադրութիւնը կենդրոնացած էր բեմի վրայ և շարունակ քրքիջ էր տիրում գահչիճում: Ափսոս որ գահչիճը ամբողջապէս լիքը չէր: Միւսների խաղի մասին չ'արժէ երկար խօսել: Լաւ էր պ. Պետրոսեանը (փաստաբան), բայց չափազանց արագ խօսելու ժամանակ սխալ մտքեր էր չաշանում: Պ. Յարութիւնեանը (Ռուբէն) իր խաղի շինծու լինելը իմանալով, ինքը իր վրայ էր ծիծաղում:

Պէտք է նկատել, որ առհասարակ, դերասանական ընկերութեան չաջողւում են կոմեդիաները և թեթեւ դրամաները: «Վարձու կին» վոդևիլը մեծ գլարձութիւն պատճառեց հասարակութեան: Այդ երեկոյեան հանդիսականները դո՛ւ սրտով թատրոնից հեռացան:

—Չաբաթ, ամսույս 18-ին, ի նպաստ պ. Արուստի լուրսցին «Պարիզի աղբասներ» 5 գործողութեամբ մեկուրթման: Ներկայացումն աջող անցաւ. մանաւանդ պ. պ. Արուստ, Օհանեանը և օր Վարդիթերը իրանց խաղով, տպարութիւն թողեցին հասարակութեան վրայ: Պ. Արուստին մի քանի անգամ բեմ հրաւիրեցին: Նա հասարակութեան

կողմից ստացաւ ճրարի մէջ դրած ընծայ: Այս անգամ գահչիճի մի երրորդ մասն էր բռնւած: Պ. Պետրոսեանը եթէ ուզում է հասարակութեանը թաւորոն գրաւել, պէտք է կոմեդիաներ և թեթեւ դրամաներ դնէ բեմի վրայ. բեպերտուարից պէտք է հանել մեկուրթմաները, և այն դրամաները, որոնք գաւառական բեմին չարմար չեն:

Աղ—Բար

Ք ն մ ա դ ա ս ա կ ա ն

Գրականութիւն և մամուլ

Եթէ մի ժողովուրդ ունենայ ամուր առողջութիւն և զօրեղ գիտակցութիւն, նա աւսման կրթիմանայ ամենամեծ պատուհաններին և կրպակաւնէ իր գոյութիւնը: Առողջութիւն և գիտակցութիւն, ահա թէ ինչ է հարկաւոր ազգերին և մարդկութեան: Որքան զօրեղ է մեր ժողովրդի գիտակցութիւնը, ունի նա այդ մասին հագացող հիմնարկութիւններ:

Որչափ պատմութիւնը միջոց է տալիս հեռու անցեալի մէջ խորատուզելու—ստու՛մ է «Արարատ»—տեսնում ենք, որ սկզբնական ժամանակներից ի վեր հայոց վանքերը եղել են ոչ թէ աշխարհից փախած և աշխարհի համար անպակտ մարդոց ապաստանարան, այլ հովանի ամեն տեսակ բարեգործական հաստատութեանց, կրթարան ու դպրատուն գրականութեան և գիտութեան ամենալաւ ներկայացուցիչների համար:

Աստուծ տաչ այդպէս լինի: «Լաւ չի՛ լինի արդեօք—ստու՛մ է Մուսկր կարծես Արարատին պատասխանելով—որ մենք շուտ շուտ իջնէինք վերացական դատողութիւնների, վարդապետութիւնների, դօգմաների աշխարհից և աշխարհից օրքան կարելի է ուշադրութեամբ նայել մեր իրականութեան: Հաստատ չենարանից, հողից կտրւած ամեն դատողութիւն, լինի դա նոյն իսկ բոլորովին անվիճելի իբրև թէօրիա, իբրև հաւանականութիւն, միշտ եղել է և կը մնայ մանկական թօթօվանք: Եթէ մեզ ոգևորող իրեալները կեանքի համար են և ոչ թէ երևակայութեան սնունդ տալու համար, պէտք է ուրեմն, որ անողորմ իրականութիւնը երբէք չըհեռանայ մեր աչքի առաջից, չըբառնայ կողմնակի աննշան հանգամանք: Նրան պիտի դիմենք, նրանից պիտի դասեր վերցնենք»:

Անհերքելի մտքեր, որոնց շարունակ պէտք է կրկնել:

«Յիրաւի—նկատում է Նոր-Գարը—կան խնդիրներ, որոնց առթիւ որչափ էլ որ գրւում է, բայց այնուամենայնիւ հարկ է լինում էլի գրել, մինչև որ խնդիրների խճճւած հանգույցը բաց անող իշխանու-

Թիւնն ըմբռնի նրանց էական նշանա-
կութիւնը և իր ջանքը գործ դնի լուծել
և օրտակար վախճան տալ այդ խնդր-
ներին հասարակութեան կեանքի բարւոք-
ման և հաստատութիւնների բարգաւաճ-
ման համար»:

Կեանքի բարւոքման խնդիրների
մէջ անշուշտ առաջնակարգ տեղ է
բռնում նրա առողջական գրութիւնը:
Չատ ուղիղ է նկատում ԱԵԸ. շարա-
թաթերթը թ է՝

«Ժողովրդի առողջութեան հարցը սար-
սափելի կարևոր հարց է: Ինչ էլ լինի,
պէտք է մտածել նրան զճշուր մասին,
եթէ մենք մարդկանց սիրում ենք քրիս-
տոնկական սիրով: Միայն այն ազգերն
են զօրեղ և կարող, որոնք բազկացած
են առողջ, ամուր անհատներին: Այն
ազգերը, որ բազկացած են թուլացած ան-
բաններին, անխուսափելի կերպով բնա-
ջինջ է անում պատմութեան միջին:
Ակներև է, որ այդ հարցը վաղուց ժամա-
նակ է դնել սասարկուում և զբաղել նրա
լուծումով»:

«Ուսումնական մասնագութիւնը կրկնա-
կի աւելի է, քան եւրոպական միւս պե-
տութիւնների մէջ—ասում է Руч րագի-
րը: Համեմատելով սրանց հետ, մենք տա-
րեկան կորցնում ենք հազարին տասնու-
եօթ հազի աւելի, այսինքն ընդհանուր
վերառած տարեկան 2 միլիոն մարդ զոհ
են գնում մեր անբաղաբախթութեան:
Իսկ համեմատելով օրինակ Նոր-Ջեյանդի-
այի հետ, Ռուսիայում տարեկան բարյու-
ղին է զուր աեղը մեռնում են 3 միլիոն
հոգի»:

Թէ որքան հիմք ունի չիշեալ թեր-
թը, ցոյց է տալիս թւահամարը:

Մասնաւորենք խօսքը մեզ հայերիս
վրայ: Տարեկան քանի՞ հազարաւոր
երեխաներ են թաղում մեր տղէտ և
անզոյշ մայրերը.. Ռրքան դեռահաս
երիտասարդներ զոհ են գնում իրանց
անզուսպ և ստոր կրքերին: Արտաքին
թշնամիները ոչ մի ազգի այնքան
չեն վնասում, որքան սեպհական տղի-
տութիւնը և անհոգութիւնը..

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ի Ի

Իզմիրեանց կսակի գործադիր
Մնայուն Յանձնաժողովոյ ի ժ.Ֆ.
նանդիսի Սահակ Մետրոպեան
մեցանակաբաւխութեան, ի 25
յունիս, 98.

Սանկայասիւ Մրազան Պասիարսի հայր
և Պասիարսի հանդիսակաւսի.

Իզմիրեան, կտակի գործադիր Մնա-
յուն Յանձնաժողովս իր պաշտօնավա-
րութեան հնգամեայ երկրորդ շրջանն

ևս աւարտելէ չետոյ՝ թէև համա-
րատութեան տեղեկագրով մը հրա-
ժեշտ մատուցած էր իր պաշտօնէն, սա-
կալն պատկառելի Խառն Ժողովը պակա-
սեայ երեք անգամոց տեղ նորոյ ընտ-
րութեամբ հնգամեայ երրորդ շրջանի
մը համար ևս վերահոյած լինելով
գիւրքն ի պաշտօն, Յանձնաժողովս
բարեբախտ կրհամարի գինքն որ այս
երկուտասներորդ անգամ ըլլալով՝
պատիւ կունենայ կատարել Սահակ —
Մետրոպեան մրցանակաբաշխութեան
հանդէսն, զոր ինչպէս յայտնի է՝ հաս-
տատած է բարեչիշտակ Աղա Յովսէփ
Իզմ րեանց գովելի զգայմամբ և կտա-
կաւ:

Այս տարւայ շրջանին մէջ ներկա-
յացած են Յանձնաժողովոյս հետե-
ւայ եօթն երկասիրութիւնները:

1. Բեւեռագիր արձանագրութիւն-
ներ ի Ռուսաստան. գործ Պ. Խաչա-
տուր Յովհաննիսեանցի, տպեայ ի վանս
Ս. Աղաբու ի Վենետիկ. 1897-ին:
Այս գործ որ կրբաղկանայ 63 երեսնե-
րէ և ժՆ. գլուխներէ, բաղաձոյ ի մարդ-
մանութիւն մ' է «Նիկողոսկու Անդրկով-
կասի բեւեռագիր արձանագրութիւն-
ներ» անուն գրքէն, և համառօտ տե-
ղեկութիւններ կուտայ ուսումնական հայ
գաւառներուն գանազան տեղերը զըտ-
նուող բեւեռագիր արձանագրութիւն-
ներուն վրայ:

2. Վարանդա գործ պ. Ե. Լալայ-
եանի, տպագրեայ 1897 ին ի Տփլիսի,
ի տպարանի Մ. Գ. Ռոտմիսեանցի: Կը-
բաղկանայ 244 երեսներէ և կըպար-
ունակէ իր մէջ Չուշի բաղաբի վի-
րաբերող մի բանի պատկերներ, տե-
ղեկութիւններ կուտայ Վարանդայ գա-
ւառի բաղաբներուն և դիւղերուն,
լեռներուն և դաշտերուն, գետերուն
և կրիմային, Ժողովրդեան և անոնց
սովորութեան ու արհեստներուն վրայ
ևն. ևն., գանազան հեղինակներու
գործերէ հաւաքածոյ մը, որ արդէն
հրատարակած է նոյն իսկ Լալայեան-
ցի «Ազգագրական հանդէս» ին մէջ:

3. Միխայիլ Ա. Նալբանդեանց գործ
պ. Երևանդ Չահագիզի, տպեայ ի Մոս-
կու, ի տպարանի Բ. Բարխուդարեանի,
1897-ին: Այս գործ որ 161 երեսներէ
և ժՆ. գլուխներէ կրբաղկանայ, պարզ
կենսագրութիւն մ' է հանգուցեային:

4. Խաչատուր Աբովեան. — Գործ
պ. Ներսէս Տէր-Արապետեանի, տպեայ
ի Տփլիսի ի տպարանի Մ. Զարաձէի և
ընկերութեան, 1897-ին. կրբաղկանայ
138 երեսներէ և ժՎ. գլուխներէ. սա
ևս պարզ կենսագրութիւն մ' է հանգ.
գիտական Խաչատուր Աբովեանի. և
արտատպեայ (Լուսն) գրական հան-
գէսէն:

5. Սոկրատայ Սոխրասիկոսի Եկե-
ղեցական Պատմութիւն — Հրատարա-
կութիւն Ս. Իջմիածնայ միաբան Տ.
Մետրոպ. Վ. Տէր-Մովսէսեանի, տպեայ
ի Ս. Իջմիածին, 1897-ին: Այս գործ

հրատարակութիւն է Սոկրատայ Եկե-
ղեցական պատմութեան և Սեղբեստ-
րոսի վարուց պատմութեան, ըստ
թարգմանութեան նախնեաց, որոց
կրած է հրատարակիչ վարդապետն օ-
րինականաց բաղաբատութիւններ և
մանր ծանօթութիւններ. և լիկզբը
գրած է հարիւր էջէ բազկացեայ շա-
ւաքաբան մը, յորում կրխօսի հրատա-
րակեայ մատենագրութեանց ձեռա-
գիրներուն վրայ, որք կրգտն ին ի Ս.
Իջմիածին, և ի Ս. Երուսաղէմ և ի
Վենետիկ, և տեսութիւններ կ'ընէ
Աստանգիանոսի դարձին պատմու-
թեան վրայ և կրբաղկատէ Խորենայ-
ւոյն և Սեղբեստրոսի պատմութիւնները:

6. Եղիշե. — գործ Տ. Բաբգէն Ծ.
Վ. ի Կիւէսէրեան առաջն. Տեղապա-
հին Աանիկի. ձեռագիր. — Այս աշխա-
տութիւն 500 երեսներէ բաղկացեայ
և մի շառաքաբանով և մի ներածու-
թեամբ չորս գրքերու բաժանեայ
քննական ուսումնասիրութիւն մ' է,
ցուցնելով խուզարկութեանց համար
տեսած հեղինակութիւններն և հրա-
տարակութիւնները, թարգմանութիւն-
ներն, ուսումնասիրութիւններն և
ձեռագիրներն. ընդարձակ ծանօթու-
թիւններ կուտայ Եղիշի անձին, և
իւր պատմագրութեան նիւթին վրայ,
կրխօսի նոյն գրութեան ժամանակին
ու աղբիւրներուն վրայ, ծանօթու-
թիւններ կուտայ Եղիշի վերաբրեայ
ուրիշ գործոց վրայ, թէ՛ պատմական
և թէ՛ գրական տեսակէտէն ամեն
խնդիրներն շառաք կրբերէ և լուծու-
մերը կրցուցնէ. կրխօսի նաև մոզա-
կան կրօնքին և վարդապետութեան
և բարոյականին, և Տէրին ու օրէն-
քին ու պաշտօնէութեան վրայ. բա-
ցատրութիւն կ'ուտայ Գ. դարու Հայ
Քրիստոնէութեան և Ե. դարու Հայ
եկեղեցւոյ վարդապետութեան, խոր-
հուրդներուն, պաշտամանց, պաշտօ-
նէութեան և վանականութեան, և
նոյն իսկ Եկեղեցւոյ ողուցն վրայ:

7. Գրիգոր Նարեկացի. գործ Տ.
Մուշեղ Ծ. Վ. ի Սերովբեան, առաջն.
Տեղապահին Արաբկիրու. ձեռագիր.
— Այս գործ մի շառաքաբանով և ժ.Ֆ.
գլուխներու բաժանեայ 326 երեսներէ
բաղկացեայ կենսագրական, մատենա-
գրական և քննական ուսումնասիրու-
թիւն մ' է: Պատմական և ժամանա-
կագրական տեղեկութիւններ տալ,
չետոյ՝ կրգնել Ս. Գրիգոր Նարեկացւոյ
ճննդեան թւական, ազգատոհմը, գաս-
տիարակութիւնն ու կեանքը. կրթէ
անոր երկասիրութիւններն և կրպարզ
մատենագրական ոճն. ընդարձակօրէն
կրխօսի Նարեկացւոյն ժամանակակից
կրօնալին ներքին շփոթութեանց և
Թոնդրակեցիներու և Անձևացիներու
վրայ: Չորս երկար հատուածներով կը-
խօսի. Նարեկ աղօթագրոյ գրական
արժանեաց, և խմբագրութեան ժա-

մանակին ու պատճառին և աղօթից թուշն վրայ, և կրվերուծէ ինչ ինչ մասերը խոհուն կերպով, բաղդատութեան կրգնէ Յովհաննէս սարկաւագ և Բենիկ վարդապետաց աղօթքներուն հետ, ինչպէս նաև օտարազգի նմանօրինակ երկասիրութեանց հետ: Յատուկ հետազոտութիւն մ' ունի տաղաչափութեան վրայ, և յառաջ կրբերէ նարեկացիին աղօթագրքէն զուրս տաղաչափական գրեւծները, կրբարձրացնէ նարեկի լեզուն ու ոճն, և մանաւանդ ողին ու զգացումն, առանց ծածկելու ինչ ինչ թերութիւններն և խրթնութիւնները: Կրփակէ պատմելով երանելոյն վերջին օրերն ու վախճանումն և վախճանելէն յետոյ վաշելած բացատրիկ պատիւները, սրբոց կարգը գաստիլն ու տօնելին, և նորա անլան վանքեր կառուցելը:

(Վեցր միւս անգամ)

Պ ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Ջանազան տեղերից ստացւած տեղեկութիւններին նայելով, եռանդուն կերպով առաջ է տարւում հայոց եկեղեցական-ճխական դպրոցների կայքերը պատշաճաւոր իշխանութեան յանձնելու գործը: Այս օրերս նոյնպէս Թիֆլիսի դպրոցները սկսեցին յանձնել նշանակւած յանձնաժողովին իրանց կայքերը:

Գէորգեան ճեմարանում այս տարի եղիլ են 183 աշակերտներ, որոնցից 161 արիթմոշակ են եղած և միայն 22-ի համար թոշակ է վճարւած: Մեր կարծիքով այդ թւերից կարելի է բաւական տխուր երկակայութիւններ անել: Նախ այն, որ աշակերտների ընդհանուր թիւը շատ չնչին է: Ամբողջ ազգի միակ բարձր հոգևոր դպրոցը գոնեա 200 աշակերտ չունի: Յետոյ տխուր է այն, որ ինչպէս երևում է մեր բազմաթիւ ասպհոգւած դասակարգերի համար ճեմարանը կարծես գոյութիւն չունի:

ՃԱՆԱՊԱՐԷՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ներկայ օգոստոսի մէկից Թիֆլիսից Վլադիկաւկազ Ռազմավիրական ճանապարհի վրայ ամեն օր երթևեկութիւն ունեն արդև օմնիբուսներ էժանացրած գնով: Օմնիբուսի մէջը 6 ր., իսկ գուրը 4 ր.:

Վլադիկաւկազից մինչև Պետրովսկ երկաթուղին շուտով պատրաստ կըլինի: Իսկ Պետրովսկից մինչև Բագու գեո շատ դործ է մնում կատարելու:

Լ Ո Ր Ե Ր

Կ. Պոլսի պատրիարքարանը կարգադրել է 500 ոսկի նպաստ ուղարկել Վան, Բաղէշ, Երզնկա և այլն: Չնչին նպաստ է, բայց հայկական գաւառներում չնչինն էլ մեծ արժէք ունի:

Ատրպատականի համար առաջնորդ նշանակւած եպիսկոպոս Ալատեանը և Թէհրանի ու Հնդկաստանի համար նշանակւած եպիսկ Տէրունեանը ճանապարհւել են իրանց պաշտօնտեղերը:

«ԱՅԿԱՅ»-ի ասելով, մտադրութիւն կայ փոփոխութիւններ մտցնել Կովկասի մի քանի բարեգործական ընկերութիւնների կանոնադրութիւնների մէջ:

Պարսկաստանում միտ 10 հազար հայեր մտադիր են մահճեղականութիւն ընդունել, կամենալով ազատել խաների հասցրած նեղութիւններից: Ահա մի անչեւտաձգելի գործ, որ անմիջական օգնութիւն է պահանջում: Եթէ աշխատող մարդիկ և մի փոքրիկ նիւթական նպաստ չընենալով անձնաւորութիւններ գտնելն, անշուշտ կարելի կըլինի յետ կանգնացնել այդ խեղճ ժողովրդին մթութեան անգունըր նետւելու դիտաւորութիւնից, Գործին զբաղուի անցնելը անշուշտ էջմիածնի պարտքն է, իսկ հարկաւոր օգնութիւնը չի խնայել մեր ժողովուրդը, եթէ եռանդուն մարդիկ գործը ձեռք առնեն:

Հիմնում է Ռուս-Վովկասեան անունով մի ընկերութիւն 11 միլիօն դրամապլսով, որ բաժանւած է 45 հազար բաժնետոմսերի, իւրաբանչիւրը 250 րուբլի: Ընկերութեան նպատակն է մշակել գանազան հանքեր Կովկասում և այլ տեղերում ու նոյնպէս հառուցանել մետաղահալական և մեխանիկական գործարաններ:

Պարսկաստանում գինւորական նախարար է նշանակւած Զիլի սուլթանը, շահի աւագ եղբայրը, որ մի բանիմաց և լուրջ անձնաւորութիւն է: Անկասկած այց մի նշանաւոր նորութիւն է պարսկական գինւորական գործի համար: Բայց կարող է

և բարերար ազդեցութիւն ունենալ առհասարակ պարսկական քաղաքական ընթացքի վրայ:

Բաթումում էլէկտրական լուսաւորութիւն մտցնելու հարցը արդէն վճարւած է: Ջանազան մասնաւոր Ֆիրմաներ առաջարկել են իրանց պաշտօնները Էլէկտրական լուսաւորութիւնը կապարով վերցնելու համար: Բայց գեո որոշւած չէ, թէ ու՞մ պէտք է յանձնել:

Ամերիկացի Փրեզնոյէ քաղաքի հայերը, որոնց մի մասը բողոքականներ են, որոշել են ուղարկել Պոլսի պատրիարքին տարեկան գոնեա 360 գոլլար որբերի օգտին գործարկելու համար: Իսկ Անգլիացի Մանչեստեր քաղաքի հայերը որոշել են իրանց ծախսով 30 որբ պահել: Այդ նպատակով պատրիարքը կարգադրել է Այնթապի մէջ որբանոց բացել: Վանայ նահանգի որբանոցների թիւը պատրիարքը չորսի է բարձրացրել: Յատկապէս սոջկանց համար որբանոց պիտի բացի: Առհասարակ պատրիարքը եռանդ է ցոյց տալիս դէպի որբերի պաշտպանութեան գործը, ուստի հարկաւոր է որ ազգը նպաստէ նրան այդ ասպարիզում:

Հաստատ աղբիւրից հաղորդում են, որ Բագուի թատրոնական մասնաժողովը հրաւիրել է բոլոր աչքի ընկնող հայ դերաւաններին առաջիկայ սեզոնին: Բացի սրանից Կ. Պոլսից հրաւիրւած են մի քանի նոր դերասաններ:

Բագուի բաղնիքների սասին մեզ օտարեթ լուրեր են հասնում, որոնց պիայ կամ ուղիղ լինելը դուաւ է սուսգել: Հաւասայցնում են, որ աստեր բաղնիս գնալով ստանում են կաշիի միւսնորսիւններ եւ այդ բացասում են նրանով, որ բաղնիքներից ոմանի աղէն գործածւած ջուրը նորից պարզացնում են, սահացնում և նորից գործարում:

Բաթումի հայոց եկեղեցոյ շինութիւնը կիսով չափ տուաջ է գնացել: Զէնքը գեղեցիկ է, բայց բաւական բնդարձակ չէ:

Խառն լուրեր

Ապանիան բնդունել է հաշտութեան պայմանները, որ առաջարկւած էր Ամերիկացի կողմից: Կուբան հասարի նպատակին, այսինքն անկախութիւն ստացաւ: Նրա հետ միասին բախտաւորուեց և Պորտօ-Րիկօն: Ֆիլիպպինեան կղզիների դրութիւնն է անորոշ մնում: Հաւանական է, որ նրանք կըման գեո Սպանիայի ձեռքում: Եւ որովհետեւ այդ կղզիների ազգաբնակութիւնը ոչ պակաս գնա-

հատում է իր անկախ կեանքը և ոչ պակաս պատրաստութիւն ունի իր կամքը անցկացնելու, ուստի այսուհետև Սպանիան ստիպւած կըլինի նոյն խաղերով զբաղել Գիլիպպիանեան կղզիներում, որոնցով մինչև այժմ զբաղուած էր Կուբայում: Եւ երևի ապագայում Սպանիան ստիպւած կըլինի մի նոր պատերազմ մղել թերևս Սապոնիայի դէմ, որ պաշտպան կըհանդիսանայ Գիլիպպիանեան կղզիներին, որպէս Ամերիկան Կուբային:

Փրանսիական դրամատիքական գրող Բարբիէ վերագործրել է իր ստացած Պատուաւոր Լէզիօնի շքանշանը հետևեալ նամակի հետ միասին: «Պարոն նախագահ: Կան մարդիկ, որոնց համար, որպէս Ձեզ խոնարհ ծառայի համար, շքանշանը մի պատուաւոր ընծայ է, բայց կան և այնպիսի մարդիկ, որոնք շքանշանը կրելով իրանք են պատիւ բերում այդ շքանշանին: Այդպէս է մենք Ջօրան: Նա մենակ բաւական է, որ ազատէ Փրանսիան այն կեղտից, որ շարունակ են նրա վրայ միմեանց հոտ ից բոլոր վատ հովիւները, որ յանձն են առնում պաշտպանել Փրանսիային: Ես անձամբ գտնում եմ, որ ի նկատի ունենալով այն միջոցը, որ ձեռք է առնուած Ջօրային վերաբերեալ, ինձ էլ մտում է հեռանալ այն հիմնարկութիւնից, որ դուք է արել Ջօրային իր միջոցով, ուստի բարեհաճե՛նք ընդունել իմ հրաժարականը: Ես նոյնքան ուրախ վերադարձնում եմ իմ օֆիցերական համազգեստը, որքան ուրախ ստացել եմ նրան:

Պոլսի Փրանսիական զեսպանը Պոլսի վերադառնալով բերել է իր հետ յուրը հրահանգներ Ասում են, եթէ Թիւրքիան մերժէ բաւականութիւն ապ Փրանսիային, վերջինս կըգրաւէ մի ծովեզերեայ կենդրոն Սիրիայում: Երանի թէ մերժէր:

Չինաստանի մայրաքաղաքում հիմնել է մի ազգասիրական միութիւն «Չայեմիէր պաշտպանող ընկերութիւն» անունով: Ընկերութեան առաջին ժողովում մասնակցում էին աւելի քան 200 երևելի մարդիկ: Գլխաւոր նպատակն է աշխատել պահպանել երկրի ամբողջութիւնը, ազգը և ազգային կրօնը, քաղաքական իրաւունքները, ազգային անկախութիւնը, և որոնել ամենալաւ միջոցները ներքին բարեկարգութիւններ մտցնելու և օտարազգիների հետ յարաբերութիւն ունենալու համար:

Անգլիական մամուլը պարզորէն չայտնում է, որ Անգլիան մտադիր չէ երբեք գուրս գնալ Եգիպտոսից և այն միտքն է չայտնում, թէ իրանց բոլորովին ի գուր են մեղադրում ուրիշները: Նրանք չիշեցնում են, որ Փրանսիան էլ Թունիսը միայն ժամանակաւոր է վերցրել, իսկ այժմ կատարելապէս սեպհականացրել է և ոչ ոք

չէ բողոքում այդ բանի դէմ: Անգլիական մամուլը կարող է բերել և ներցեղովինիայի օրինակը և առհասարակ բազմաթիւ օրինակներ դիպլոմատիկական պրակտիկայից:

Գերմանական կաշարը մտադիր է այցելել նոյնպէս Եգիպտոսի մայրաքաղաքը: Կաշարը վաղուց ցանկութիւն է չայտնել անձամբ տեսնել Խրդիւի հետ: Առհասարակ դերմանական կաշարը կարծես հետևողաբար աշխատում է մտաւորութիւն հաստատել անբաղաքակիրթ պետութիւնների ղեկավարների հետ, այդ խիստ ձեռնառու է Գերմանիայի արդիւնազորութեան համար: Ուստի գարմանայի չի լինիլ, եթէ մի օր լսենք, թէ Վիլհելմ II մտադիր է այցելել պարսկական և աֆղանական մայրաքաղաքները:

Գերմանիայում հասարակաց կարծիքը վրդովուած է այն տարածանութեան մասին, որ տեղի է ունեցել կաշարի և Գերմանիայի կիպպի, իշխանութեան խնամակալի մէջ: Իշխանութեան խնամակալի ընտանիքի անդամները պատշաճաւոր պատիւ չըտանալով զինուորականների կողմից, խնամակալը գանդաուել է կաշարին, իսկ վերջինս նրան խիստ անբաւարար, մինչև իսկ վերադարձնելով պատասխան է տւել: Այդ պատասխանի մէջ շատերը նկատում են Պրուսական տան ձգտումները հետզհետէ թուլացնելու գերմանական մանր մուկը պետերի իրաւունքները:

մեր պատկերները

ԻՐ ԱՍԻԵՐԻ ԴԷՍ

Փոքրիկ կատուն տեսնում է իր սուրբը հայելու մէջ և բարկանում է: Ինչպէս խոժ. ուել է նա իր աչերը, որքան անգիտակցական հայեացք ունի, որքան կուսաւոր է... Իսկ ինքը իսկական կատուն իբր թէ նրա նման ծոյց չէ, անմիտ չէ, կուսաւոր չէ... Տեսնում է շատ անկամ գրականութեան հայելու մէջ ընթերցողը իր հարազատ պատկերը և փոխանակ իր ետիւնը ուղիղ ըմբռնելու և նրան բարձրացնել աշխատելու, նա կարծում է թէ այդ պատկերը բոլորովին ուրիշ արարած է ներկայացնում, որ միայն հայելու մէջն է ապրում:

ԱՂԽԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՅՆՎՈՒԹԻՒՆ

Կեանքի դասը հազիւ ոտք գրած դեռահաս տիկինը, որի կրծքի վրայ հանգստանում է սիրոյ ասուածը, զգում է իր սրտի խորքերում՝ թէ իր և իր սպասուած փոքրիկները կեանքը, ուրախութիւնը, վայելչութիւնը կախած է իր աշխատութիւնից: Զրկույ աշխատանք, չէ կարող լինել գուտ ուրախութիւն: Իսկական ուրախութիւնը միշտ աշխատանքի արդիւնքն է: Եւ անա խելացի տանտիկինն ուշադրութեամբ զմայլում է, թէ ինչպէս աշխատութեան տիպարը, ստրուկ արհեստա

որը մետաքսաթելից ժառան է ստեղծում, Եւ մտածում է, մեր հերոսուհին, թէ ինչ պիտի ստեղծէ ինքը:

ԻՏԱԼԱՎԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Թշուառ չէ Իտալիան - ասել է Նալբանդեանց: Նաչեցէք նրա սրբոյ վրայ. ծովը ալեկոծւած է, ցամաքը դրդում է ուժեղ հրաբուխի ազդեցութիւնից, բայց նա անվեհերութեամբ առաջ է վարում իր փոքրիկ նաւակը: Նա նկատում է ափի վրայ հայրենի փոքրիկ եկեղեցին Քրիստոսի խաչով զարգարած և հաւատացած է, որ ինքը պիտի ապահով ափ հասնէ: Հաւատ ճշմարտութեան վրայ և վստահութիւն իր ոյժերի վրայ՝ կարող են հրաշքներ գործել:

Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ

Մեր երկրի մթնոլորտն այնպիսի բնաւորութիւն ունի, որ շատ անգամ մինչև փոթորիկ չըլինի, օդը չի պարզւիլ: Այդպէս է նոյնպէս մարդկային մթնոլորտը, պատմական կեանքը: Երբեմն կարծես կեանքը ապականուած է, մարդիկ իրանց էութեամբ մանրանում, հերոսները տեղ ծաղրածուներն են բռնում, գիտութիւնը ընկնում, արեւստը ստորանում... բարոյակ սն օդը փոշուում է ու թանձրանում: Բայց ան մի փոթորիկ. ան մի ազնիւ չաղթանակ, և ամեն ինչ փոխում է թարմ գոյ է փչում, շնչառութիւնը թէթեւանում է, կեանքը ծաղկում է...:

ԱՐԽԱՏԱԿՐԱՏ ԶՈՒՆԸ

Թաւիշապատ բաղկաթոռի վրայ հրպարտութեամբ բազմել է անպիսի գամբուր նրա առջև սեղանի վրայ շարուած են բազմատեսակ կերակուրները և համեմները: Այդ երևակալութիւն չէ, այլ կեանքից վերցրած իրական պատկեր: Իսկ մարդը, Ազամի հարազատ որդին հարիւրաւոր վերստեր է անցնում, որ մի կտոր չոր հաց ստանայ և մի բաժակ սաւը ջուր...:

Ս ո ՚ ր հ ա ն յ ա կ

Մարտա. Ե. Ա.: 2եր գեղեցիկ յոյււածր վերջն ասանայոց կրակեմի սպագրել: Զարուանիցեղ այդ ձեռով: Ուղարկած յուսանկարը աչոյ չէ:

Նիւ. Նովգորոյ. Գ. Ե.: Ամբողջ սաւայ բաժանորդագիրը 7 ր. լիովին վնասողներին է ուղարկուած արեմիան:

Աստախան. Գ. Կ.: Խնդրում եմ այդտեղի գործակալի միջոցով յայնձե՛ք, որ Եփոսոքիւններ գուրս չըգան: 2եր միւս պահանջներ կատարած են. արեմիան ես ուղարկեցիմ:

Մոսկու. Եր. Տ. Մ.: Կիւ սաւայ բաժանորդներին արեմիա չէ տւում: 2եզ նամակ գրեցիմ:

Օդեսա. Ա. Ի.: Մեզանից անկախ պատճառով յոյս չըտեսու:

Բագու. Կ. Տ. Եովի.: 2եր միջոցով գրած բաժանորդներից մի քանիսին սխալմամբ ուղարկած են կրկնակի համարներ եւ նամակներ: 2եր նշապահութիւնը օրինակելի է: Զուտով նամակ կըսանամ:

Խմբագիր-հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՆՆԱԲԱՐ ՀԻՐԱՆՎԱՆՈՅ

Բ. Ն Ա Ի Ա Ս Ա Ր Դ Ե Ա Ն Ի

(Կուկիա, Վարսնցովի արձանի հանդիպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

Ա. Ա. Ա. Ս. Ս. Ս. Ս.

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վնասակալի (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. Զիլիպանի—9—10 ժ. աչքի, ներքին նեարոլոգիան հ.

Կիւն-բիլի Ե. Ի. Բուդենիո—10—11 1/2 ժ.: կանանց և տղայի. ծաղիկ պատաստան:

Զ. Ի. Բարանասեանց—11 1/2—12 ժ. կ. հ.: Ի. Փ. Պրոսասեանց—12—1 ժ. սկանչի, կոկորդի, սրի և կրծքի հ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1 1/2 ժ. ներքին և ներխայտց հ.

Ա. Գ. Գուրկո—1 1/2—2 1/2 ժ. ներքին և միզասեռակալի հ.

Մ. Բ. Կ. Կ. Կ.

Ա. Մ. Փուլիբեան—6 ժ. ներքին և ներխայտց հ.

Բ. Ա. Նաւասարդեան—6 1/2—7 ժ.

Ա. Ն. Զպալովսկի—6—7 ժ. նեարոլոգիան (էնկերարածոքիան), վնաս. և ծորի հ.

Տ. Ի. Բուդենիո հիւանդանոցում իմիապան և խոշորագույնակալ հետազոտութեան ներ և անում մեղի, խիսի, արեան, կարի և այլն:

Վճար 50, կ. չբաւարները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար աւանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝ ԲՅՅիպպե Նաւասարդեան

Անդրկովկասեան երկաթուղի Մարդաստ գնացների երթևեկութեան

Գույրաններ

Գույրաններ

Բազու

Սեւախ

Գանձակ

Արտասճա

ԹԻՒԿԼԻՍ

Դոբի

Միխայլովո

Բարում

Մանոթ. Սեւ քաւանները գիշեր են: Թիֆլիս հասնում են գնացքները՝ Բաթումից 8 ժ. 22 ր. երեկ. և 9 ժ. 07 ր. առ., Բազուից 8 ժ. 26 ր. առ. և 6 ժ. 33 ր. երեկ. Թիֆլիսից գնացքը Գուրս է գալիս՝ Բաթումից 9 ժ. 10 ր. առ. և 7 ժ. 48. եր. Բազու 9 ժ. 05 երեկ. և 10 ժ. 57 ցերեկ.:

Ա յ յ ա տ ե ն ս ա լ

Ա Տ Ր Ա Յ Ի

Ք Ո Ռ — Ն Ղ Ի Կ

Վէպը

(Չիրակեցիների կեանքից):

Լ Ո Ր Մ Ա Յ

Իրական հանդիսի 1898 թ. ր. գիրք և ուղարկեց բոլոր բաժանորդներին: Բացած է (1899 թ. չորրորդ ամիսի) բաժանորդագրութիւնը. 2 գրքի գինն է 3 ռուբլի:

Հրատարակիչ՝ Գիւն ա. Բախ. Աղանեսց

Պայմաններ բաժանորդագրութեան

I

Տարազի 6 ամսուայ բաժանորդագրիւնը յուլիսից մինչև յունուար 99 թ. 3 ր.

II

Ալբիւրի տարեկան բաժանորդագրիւնը յունուար 98-ից մինչև 99 յուն. 3 ր.

III

Տարազ մարտից մինչև յունուար 99 թ. Ալբիւր յունուարից

Արքոմ-Ալմանախ Հայրենասէր Իփիգենիա սրճալ. } 9 ր.

Վեհափառ Հայրիկի և Ամենապատիւ Սրբազան Իգմբր լեանի նենապալու վրայ պատկերները վաճառուում են հաս 10 ր.: ԳՐԳՐՈՐ ԵՐԾՐՈՒՆՆՈՒ Ենթադրելով վրայ պատկերը 3 ր. Եանապատիւնը և խոյլ 4 Վաճառուում է Յովն. Տէր-Սարգսեանի թղթագիր. Կառնանոցում:

Ալբիւր-Տարազի գրասենեակում վաճառում են:

- ԱՂՈՒՍ-ԱՄՄԱՆԱՍ 4 զոյնով, ազգ. և այլն 101 պատկեր. 2 ր. փոխ. 1 25
ՍՍՈՒՆԻ ԿԵՆՎԵՅ—Տերեկի երկուց IX դարու (սակաւածիւ) . 2 —
Ղ. ԱՂՅԵՆՆՅ. Բանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. փոխարէն . . . 1 —
ՅՈՎՅ. ԹՈՒՄԱՆԵՆՆՅ. Բանաստեղծութիւններ 60 կ. փոխ. . . — 30
ՍՐԻՆԿ. Բնութեան երգեր և Բանաստեղծութիւններ 80 կ. փոխ. . . 50
ՍԱՓՈ. 50
Ս. ԻԶՄԻՐԵՆՆԻ ձեւապալու վրայ պատկերը (սակաւածիւ) . . . 10 —
ԿԻՐԿՈՐ ԱՐԾՐՈՒՆՆՈՒ պատկերը 6 ր. փոխ. 4 —
ԲԵՐԿՐԱՆԵ, խրոմօ-ակաւարել, ՌԱՎԱՅԻԼԻ Մաղճաններ, հրեշտակներ, ԲՈՒԲԵՆՍԻ Յիսուս և Տիրամայր, ԱԿՐՍՊԵՐԻ Բօժի. Զուլիկի թափանցիկ լուսի զէմ նկար, բնդամներ 8 պատկեր. 2 ր. փոխարէն . . . — 60
ՄԻՔՅԻԼ ԱՂՅԵՆՆՅԻ մեծադիր ֆօտօ-գրանիւր պատկերը . . . 1 20
ՀԱՐՍԻ ԱՂՅԻԿ ոսկէ շղթաներում — 50
ՄԱՅՐԻԿ ԵՆՁՐԱՆՆՈՒՄ խրոմօ 1 50
ԶՄԵՆ — 20
ԱՐՏԱԶԻՍ Բ. թագաւորի մուտքը Ի Հոմ. — 30

Հարուհակում է սարեկան բաժանորդագրութիւնը

Պատկերագրի ամսագրի ԱՂՅԻԿ

Նոր բաժանորդները կրասեան բոլոր յոյս սեամ № 2-ը—յունուարից

Տարեկան գինը 3 ր. (արտասահման 12 ֆու.) Արքոմ-Ալմանախի (101 ժամանակակից և հետաքրքրական պատկերներ)

Հետ 4 ր.:

Հասցէն՝ Тифлисъ, ред. Агдогъ.

Հ. յ. սեամ

ԱՂՅԻԿ ԿՐԿՆԻ ԶԱՆԿԻՍ 1898 № 1.

Գինն է 2 ր.:

Երկու գրքի բաժանորդագրիւնն է 3 ր. Գիւնի՝ թղթակցութեան համար Է. Лалавица, Герусы (Загезурский у.)

Բաժանորդագրութեան համար Амбарцуму Каримянц, Тифлисъ, семинария Перенелъ:

МАГАЗИНЪ ЗОЛОТЫХЪ И БРИЛЛАНТОВЫХЪ ИЗДѢЛІЙ

БАРСКАГО (Головинскій проспектъ)

Открыто отдѣленіе отпическихъ товаровъ, самыхъ изящныхъ пенснэ и очковъ золотою и чернагохоуо оправою. Отпускаю по рецептамъ окулистовъ. Также принимаю въ починку разные очки и пенснэ. Продажа биноклей.

ՄԻՔՅԻԼ ԵՆ ԿԱՐՈՒՐԱՅ ԿՐՈՅ

Ն. ՄՈՒՐԱՆԵՆՆԻ ՀԱՎՈՒՍԻ

վաճառանոցում՝ ստացել են գարնա՝ այլի և ա՛նանային զգեստներ տղամարդկանց և երեխաների համար. գները չափաւոր: 10-6